

Դ100Դ

Ո. ՌՈԶԵՆՖԵԼԴ

ՊԵՌԵ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՊՐԱԿ X.



Ի՞նչ է ՏՈՒԻՄ ԲԱՆՎ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐԵՆՍԳԻՐՔԸ

№ 41

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՁԵՍ/
ՏԿԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

— յեվ —

Վ Ա Ճ Ա Ռ Վ Ո Ւ Մ ։ Ե Ն

թ. կ.


- | | |
|---|----|
| 1. Ա. Լազուլսկի — «Հոսանքների պայքարը համաշխարհ
հային արհամաժման մեջ», (սպառ-
ված) | |
| 2. » » «Արհմիությունների խնդիրներն ու
գործելակերպը», (սպառված) | |
| 3. Ե յ դ ո ւ ս — «Ակնարկներ Արևելքի բանվորական
չարժման մասին», (սպառված) | |
| 4. Արկ-Ան — «Բանվ. շարժման պատմ. Անդիմա-
լիայում, Ցըրանսիայում և Գերմա-
նիայում», (մնացել են սակավաթիվ
որդինակներ) | |
| 5. «Գործարկումների և տեղկոմների ուղեցույց» | 1 |
| 6. «Աշխատանքի որենսդիրք» | 15 |
| 7. Անոնշկին — «Պրոֆեսիոնալ չարժումն Ռուսաստա-
նում», (մնացել են սակավաթիվ
նադիներ) | |
| 8. Սենյուշկին — «Գործարկումների և տեղկոմների անե-
լիքները ներկա պայմաններում» | 25 |
| 9. Գորեվիչ — «Լենինը և արհմիությունները» | 50 |
| 10. Ֆաբրիկանու — «Սոցիալական ասլահովագրությու-
նը», (սպառված) | |
| 11. Տ ե ս ե ր ի ն — «Ի՞նչ և արհմիության կանոնադրու-
թյունը» | 25 |
| 12. Սպերանսկի — «Ի՞նչ պետք է իմանա ամեն մի մայր» . | 20 |
| 13. Բիլյուլսկի — «Բանվորների և ծառայողների պատ-
հովագրությունը հաշմանդամության
դեպքում», (սպառված) | |
| 14. «Կանոնադրություն բանվորական գրադարանից» | 15 |
| 15. Զ ե կ ի ն . — «Ակնարկներ բանվորական չափուման
պատմությունից» | 35 |
| 16. ԲԺ. Մելիքյան — «ՄիՓիլիս» | 20 |
| 17. ԲԺ. Կարապետյան . — «Մալարիա» | 5 |
| 18. «Յերեք ինտերնացիոնալը», (սպառված) | |
| 19. Դ ի ր ի ն ի ս . — «Ի՞նչ և արհմատական արտադրա-
կան միությունը» | 30 |

Ո. ԱՌԶԵՆՖԵԼԴ

Ի՞նչ է ՏԱԼԻՍ ԲԱՆՎՈՐԻՆ ԱՃԽԱՏԱՆՔԻ ՈՐԵՆՍԳԻՐՔԸ

Թարգմ. Ա. Աշոսկեան

ՊՐԱԿ XI



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՈՒՅՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ № 41



877-497

ՏՐԵՄԱՆ ԱՐԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրասենյակ . 436ր .

Գաղտնիք 2297

Տիբառ 1500

Ի՞Զ Ե ՏԱԼԻՍ ԲԱՆՎՈՐԻՆ ԱԾԽԱՏԱՆՔԻ ՈՐԵՆՑԳԻՐՔԸ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՑՊԱԿԱՌԻ-
ԹՅՈՒՆ . ՄԵՆՔ ասել ենք, վոր աշխատանքի
թրենսդիրքը պաշտպանում և բան-
քորի աշխատանքը : Իսկ այժմ ժան-
րամասն քննենք, թե ի՞նչ և աշխատանքի պաշտպանությունը և
ի՞նչով և բուրծուական յերկրի աշխատանքի պաշտպանությունը
դանազանվում պրոլետարական դիկտատորայի յերկրի աշխատան-
քի պաշտպանությունից :

Յերենք բուրծուական յերկրի մի որինակ : Ֆարբիկանները և
դործարանները պատկանում են կապիտալիստաներին և նրանց ահա-
ղին վաստակներ են տալիս ի հաշիվ բանվորի չվարձատրվող աշ-
խատանքի, ի հաշիվ նրա անխնա շահագործման : Ինչո՞ւ և ար-
տահայտվում այդպիսի շահագործումը : Մի կողմից, բոլորովին
չի պաշտպանվում բանվորի առողջությունը : Այսպես, որինակ,
ֆարբիկանների և դործարանների մի քանի համքարություններ,
ուր բանվորն ստիպված և աշխատել ֆոսֆորի, սնդիկի և այլ
թույներով հաղեցած մթնոլորտում, իսկական «տանջարաններ»
հն ներկայացնում, վորովհետեւ արդեն 2, 3 տարվա աշխատանքից
հետո մարդ հալից ընկնում է : Ադամաքրության կամ հատուկ հա-
ղուստի մասին խոսք ել չկա : Յեթե բանվորը հիվանդանա, աշխա-
տելու ընդունակությունը կորցնի, նրան փողոց կշպրտեն և դոր-
ծագուրկների «պահեստի բանակից» մի ուրիշն կը վերցնեն :
Բայց այն ձեռնարկությունների մեջ ել, վորտեղ աշխատանքի
առողջապահական պայմանները համեմատարար լավ են, բանվորը
լավ որ չի տեսնում, նրան հանդիսա շեն տալիս 10 և 11-ժամյա-
րանվորական որը, տուգանքները և աշխատավարձից կտրած դու-
ժարները, արձակուրդների բացակայությունը, արտադրանքի
բարձր նորմաները և այն : Վերջապես, հատուկ ծանր պայման-
ներում են աշխատում կոնայք և յերկինաները : Ճիշտ և, բուր-

Ժուական պատություններն ել հրատարակում են այսպես կոչված «աշխատանքի պաշտպանության որենքներ», կրճատում են բանվորական որը, պաշտպանում են կանանց և յերեխաների աշխատանքը: Սակայն այդ բոլորը նրանք իրենց բարի կամ քով չեն անում, այլ միայն այն ժամանակ, յերբ բանվոր գառակարգը համառ գործադրությին կամ հեղափոխական կովում շարունակ տվելի կազմակերպվելով և ուժեր կուտակելով՝ զոռով նրանցից կորզում ե այս կամ այն զիջումը: Բայց այդ զիջումները միայն առժամանակ են արվում: Յերբ թուլանում ե բանվոր գառակարգի հարձակումը, ամրանում ե բուրժուազիան, վաղորմությունների մեծ մասը հետ է վերցվում: Խոկ այն յերկրներում, ուր բուրժուազիան հատկապես ուժեղ է, գործարանային որենսդրությունը բոլորովին հալածված է: Այստեղ կազիտալիստները նույնիսկ սեռու չունեն այդ խղճուկ գիմակին: Այսպես, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում աշխատանքի պաշտպանության որենքը 1907 թ. տարածվում ելին ընդամենը միայն 13 նահանգում: Ըստ վորում ձեռնարկուները պարտավոր չելին ցուցակագրել տալ ձեռնարկությունները և հետեւար ամեն ժամանակ կարող ելին խուսափել աշխատանքի պաշտպանության վրոշումները կատարելուց: Ամերիկյան «անկախ», «գեմոկրատական» դատարանները կատաղի կոփի են մզում գործարանային որենսդրության դեմ իպք թե հանուն ամերիկյան սահմանադրության հիմունքների պաշտպանության: Այսպես, որինակ, Պենսիլվանիայում անվավեր են հայտարարված «արյուն-սիստեմը» (այսինքն բանվորների վարձատրությունը մթերքներով ու ապրանքներով և վոչ դրամով տալը) արգելող որենքները, իրեւ «վիրավորական խնամակայության մի փորձ ամերիկյան քաղաքացու նկատմամբ, վոր իրավունք ունի գնել ու վաճառել, ինչ վոր ուզում է»: Յերբ Նյու-Յորկում արգելվեց կանանց գիշերային աշխատանքը, այն ժամանակ դատարանը դեմ արտահայտվեց այդ արգելման, վորը իրը թե «կնոջը զրկում է այն իրավունքներից, վոր տրված են տղամարդկանց»: Միսսուրի նահանգում անվագեր ճանաչվեցին հենց աշխատանքի պաշտպանության որենքը և գործարանային տեսչության հիմնումն իրեւ դասակարգային որենսդրություն (հարգարժան դատավորներն ըստ յերեխույթին յենթագրում ելին, վոր իրենք Մորգանի և Ռոկֆելլերի հավատարիմ ծառաներ լինելով, ամենեին չեն ծառայում կապիտալիստների գառակարգին): Ամերիկայում

1907թ. հետոն ել աշխատանքի պաշտպանության գործը ամենենին ըը լավացավ:

Սակայն ամեն բուրժուազիա այնպես ուժեղ չե, ինչպես ամերիկյանը: Յերբեմն կապիտալիստներն աշխատանքի պաշտպանության գործում վորեւ զիջման համաձայնվում են, որինակ, արգելում են աշխատանքի մտնել 12 տարեկանից փոքր յերեխաներին այն նպատակով, վոր խաղաղացնեն բանվոր դասակարգին, կանոնացնեն հեղափոխական զայրույթի ու վրազովմունքի աճող ալիքը: Կեղծավորաբար բանվորների շուրթերը մեղք քսեն և ցույց տան, վոր պետությունը հոգատար և գեղի բանվորների շահերը: Յեկիրոք, որինակ, Անդվայում տրեղ-յունիոնների դեղին առաջնորդների ուղնությամբ կառավարությանը հաջողվում և բանվորական որինացրության այլպիսի փոքրիկ զիջումներով և ուժորմներով հիմնովին խարել բանվոր դասակարգին: Բանվորությունը կարծում եր (ասենք, այժմ ել մասսամբ կարծում ե), վոր բավական և, ինչպես հարկն ե, ճնշում գործել պարլամենտի վրա, լաց լինել մինիստրական նախասենյակներում, վորեւ նոր որենք, ուղղում ուժեթեացում ընդունել տալ, իսկ հետո, մեկ ել տեսնես (այսպես մի 2000 տարի հետո), կը հաջողվի բանվոր դասակարգի լրիվ արտադրմանը հասնել: Մինչև 1924թ. հոկտեմբերի վերջին ընտրությունները դոյցություն ունեցող Մակղոնալդի անդվական «բանվորական կառավարությունը» այդ գործում ամբողջովին շարունակում եր հին բուրժուական կառավարության քաղաքականությունը և դրանով խրախուսում եր անդվական կապիտալիստաներին:

Յեկիրոք, ինչ աշխատանքի պետական պաշտպանություն և հարավոր կապիտալի յերկրում, ուր կառավարական իշխանությունն իր բոլոր ժանդարմներով, վոստիկանությամբ և զինվորներով իր հիմնական խնդիրն և համարում պահպանել յերկրում հարկավոր «կարգը» և «որինակությունը», այսինքն պահպանել բուրժուազիայի իշխանությունը և հանդասությունը, հարկավոր դեպքում ամենախիստ միջոցներով խաղաղացներով բանվորներին: Հանձնարարել շահագործող-կապիտալիստին, վոր պահպանի շահագործվող բանվորի աշխատանքը, այդ նույնն ե, թե զայլին պահպան նշանակել վոչխարի հոտի վրա: Միայն այն ժամանակ, յերբ գայլերը կվոչնչանան, յերբ բուրժուազիայի քաղաքական իշխանությունը կը ջախջախի և պրոլետարիատի դիկտատորաւ-

յով , բանվոր դաստեղաթիկ իշխանությամբ կը փռիաքինզի , միայն այն ժամանակի հնարավոր կդառնա աշխատանքի իսկական պաշտպանությունը : Այս թե ինչու Առքհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մեջ իրոք դոյցություն ունի աշխատանքի այդպիսի պաշտպանություն : Ինչպես մենք արդեն վերեր մատնանշեցինք , այդ և իրազործում Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատն Աշխատանքի Որենսգրքի ողնությամբ , ինչպես և արհեստակցական միությունների աջակցությամբ ու անմիջական մասնակցությամբ :

ԱՇԽԱՏԱԿԵՐԸ ՈՐԵՆՍԳՐՔԻԲԸ : Անք հաճախ էնք հիշատակել Աշխատանքի Որենսգրքիքը , յերս խոսք և յեղել նրա այն վորոշումների մասին , վորոնք վերաբերում են հավաքական պայմանագրին և արհմիությունների իրավունքներին : Սակայն Որենսգրքի բովանդակությունը շատ ավելի լայն է : Համարձակ կարելի յե ասել , վոր Որենսգրքն ընդգրկում է բանվորի ամբողջ աշխատանքային կյանքը նրա ձեռնարկություններու մոմենտից մինչև հաշմանդամությունը , հիմնադրությունը և վերջապես մահը :

Կարող ե թվալ , վոր յերբ զոյտություն ունի հավաքական պայմանագրի , Աշխատանքի Որենսգրքը պեսք չե : Ճիշտ և , թե կոլեկտիվայժմանագրիրը , թե Աշխատանքի Որենսգրքը սահմանում են բանվորների նյութական և իրավական շահերն ապահովող կանոններ : Բայց չի վոր հավաքական պայմանագրի կետերի մասին անհրաժեշտ և համաձայնության գալ անոնեասկան որդանի հետ , և վերջինս կարող է ընդունել կամ չընդունել այն , իսկ Աշխատակի Որենսգրքի վորոշումների մասին վիճելու պիտի չկա : Նրանք հաստատված են Առքհրդային Հանրապետությունների բարձրագույն իշխանության—ՀԿԳԿ կողմից և ինչպես ասում է Որենսգրքի § 1 «առարածվում են վարձով աշխատան բոլոր անձերի , վորոնց թվում նաև տան աշխատազների վրա և պարտադիր են բոլոր ձեռնարկությունների , իմանարկությունների և տնտեսությունների համար (պետական , առանց բացարկելու նաև զինվորական , հասարակական և մասնավոր , վորոնց թվում նաև աշխատանքը տանը ավող) ինչպես և այն բոլոր անձերի համար . վորոնից վարձատրությամբ վարձու աշխատան են կիրարկում» : Այս նշանակում և , վոր Որենսգրքի առանց բացառության բոլոր աշխատավորների շահերը

սրաշտպանում եւ : Վերջապես , հավաքական պայմանագիրը սովորաբար պարունակում է իր մեջ մի շաբթ այնպիսի կետեր , վորոնք Աշխատանքի Որենսգրքի համեմատությամբ եւ ամփելի յեն . լավացնում բանվորի դրությունը :

Ի հարկե բուռժուական յերկրներում դրությունը այդպես չե , այնակազմ բանվորները մեծապես զրկված են աշխատանքի պաշտպանությունից : Նույնիսկ յեղած որենքները այնտեղ տարածվում են միայն զործարանային տիպի արդյունաբերական ձեռնարկությունների աշխատողները : Այնուամենայնիվ արհեստային դորժաներում աշխատողները , յերկաթուղայինները , ծառայողները (հարկապես առևտրական) , կոմմունալ անտեսության , հիմանգանցների , գեղատների աշխատողները , տնային կին բանվորուհիներն ամենաիրավազուրեկ դրության մեջ են գտնվում : Բայց այդ շատ յերկրներում աշխատանքի պաշտպանության որենքները չեն տարածվում շնարարական և դյուզատնեսական բանվորների վրա : Ցարական Բուռժատանում 10-12 միլիոն բանվորներից աշխատանքի պաշտպանության յենթակա ելին վոչ ամփելի , քան 1,500,000 մարդ :

Խորհրդային Միության մեջ ամեն մի բանվոր , արհմիության ամեն մի գիտակից անդամ պետք ե , ինչպես հարկն ե , իմանա Աշխատանքի Որենսգրքը , այդ հզոր զենքը , վոր Խորհրդային իշխանությունն ստեղծել և վարձու աշխատանքի տոկուն մշակների նյութական և իրավական շահերը պաշտպանելու նպատակով : Հստկապես Աշխատանքի Որենսգրքն իմանալի անհրաժեշտ ե այն բանվորին , վոր աշխատում է մասնավոր փոքր տնտեսատերի կամ ձեռնարկուի մոտ , այն մշակին (բատրակին) , վոր աշխատում է կուլալի մոտ : ԵեՊ-ի ժամանակ վորոշ ազատություն ստացած ժամանակոր կապիտալին ամեն մի հարմար զեպքում ձգտում է նորից խճճել բանվորին իր ցանցի մեջ : Աշխատանքի Որենսգրքն այն սուր զենքն է , վորով խորհրդային իշխանությունը , բանվորների և դյուզացիների իշխանությունը , խորտակում և այդ բոլոր վորոպեայինները : Բայց հաջող աշխատանքի համար հարկավոր է , վոր նրան ոգնի ամեն մի աշխատավոր , վորը պարտավոր է ամենից առաջ

*) Այսինքն պրոլետարիատի ամենասահավաք է կադմակերպված շերտի վրա , վոր ամենից ամփելի «վուանդամուր» է բուրժուազիայի համար :

իմանալ իր իրավունքներն Աշխատանքի Որենսգրքի համաձայն :

Սակայն քիչ եւ Աշխատանքի Որենսգրքն իմանալ : Հարկավոր եւ իմանալ նաև նրա պատմությունը :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐԵՆՍԳՐՔԻ ԽՈՐՀԾՈՂԱՋԻՆ ԽՃԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ իր ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ : Հաստատության արդեն առաջին ուրեում մի շարք կարեռագույն որենքներ չբառարակեց աշխատանքի պաշտպանության մասին : Այսպես, Հոկտեմբերյան հեղափոխության չորրորդ որն իսկ, 1917 թ. հոկտեմբերի 11-ին հրատարակվեց «Դեկրետ Տժամյանվորական որվա մասին» (ընդ վորում հատկապես վճառակար արտադրությունների մեջ—ծխախոտի, դաղի, քիմիական և այլն, հեղափոխության առաջին որից աշխատանքի ժամանակը կրծառակից մինչև 7 ու նույնիսկ 6 ժամ) : 1918 թ. հրատարակեց հիվանդության գեղղում ապահովագրելու գեկրեալը, 1918 թ. փետրվարին՝ Աշխատանքի Բորսաներինը, 1918 թ. մայիսին՝ Աշխատանքի Տևաչություններինը և այլն : Վերջապես, նույն 1918 թ. բոլոր զատկան դեկրեատները և վորոշումները միացվում են և կազմվում եւ Աշխատանքի Որենսգրքը (այսպէս կոչված հին Որենսգրքը) :

1918 թ. Որենսգրքը կազմված լինելով ուսումնական կոմմունիզմի շրջանում, նշանակալի չափով տարբերվում և այժմ գործող 1922 թ. Որենսգրքից : Նրա մեջ, որինակ, խոսք ել չկար հավաքական պայմանագրերի մասին (հենց հավաքական պարմանագրերն իրանք ել չկային) : Դրա փոխարեն Որենսգրքը սահմանում և ընդհանուր աշխատանքային պարհակ (ՊՈՅԻՆՈՏՅ), աշխատանքային մորթիլացցիս և այլն : Ինչու եր պետք այդ : Խորհրդային հանրապետություններն այն մոմենտում չափազանց ծանր գրության մեջ ենին : Պաշարումը և քաղաքացիական պատերազմը սովոր ավերմունք ելին առաջացնում քաղաքներում, ուժեղացնում և յին բանվորների մղումը զեղի զյուլ : Ֆարբիկաներն ու գործարանները բանվորական ձեռքի սուր պակաս ունելին հենց այն ժամանակ, յերբ անհրաժեշտ եր ուժերի և միջոցների մեծագույն լարում կարմիր բանակի մատուկարարման համար, բոլոր գույնի վոսկե ուսագիր (ԱՈՐՈՒ) ունեցողների վոհմակից հեղափոխությունը պաշտպանելու համար : Այդ շրջանում, յերբ պատերազմական դրության մեջ եր ամբողջ Խորհրդային յերկիրը, բնականարար պատերազմական գրության մեջ դրին նաև Փարբիկաները և գոր-

ծարանները : Խորհրդային Ռուսաստանի բանվոր գասակարգի վճռական կոխվների մոմենտում ընդդեմ կարվածառերերի ու գործարանատերերի և նրանց զորքով պաշտպանող Յելբոպայի ու Ամերիկայի կապիտալիստների, աշխատանքը հեղափոխական պարտականության պարհակ եր դառնում : Աշխատանքի գասալիք մենելը նույնքան ամոռթալի յեր, ինչքան կարմիր Փրոնտի գասալիք լինելը : Բայց այդ քիչ եր — յերկրի պաշտպանության, նրա վերականգնման դործի մեջ վոչ միայն բանվոր գասակարգի ուժերն ելին զբավկում, այլև հարկադրական կարգով ամբողջ մնացած բնակչության ուժերը (գյուղացիության վրա յեր աշխատանքային փոխադրական (սայլերով) տուրքը, վոչ անաշխատ բնակչությունը, բուրժուազիան ողբազործվում եր խրամատներ, խանդակներ (կանավա), փորելու, փողոցները մաքրելու համար և այլն) : Սրան նպաստում եր և այն, վոր Խորհրդային իշխանությունը ուղարմական կոմմունիզմի շրջանում վերացրեց առևտրի ազատությունը ու ազատ շուկան և իր վրա առավ ամբողջ բնակչությանն առաջին անհրաժեշտության մթերքներ ու առարկաներ մասակարարելը (ի հարկե, պահելով գասակարգային մերձեցումը) : Բուրժուազիայի համար հաստատված աշխատանքային պարհակն աջակցեց, վոր կենսագործվի այն լոգունդը, թէ «ով չի աշխատում, չի յեւուտի» :

Բազմական կոմմունիզմի պայմաններում միշտ չեր հաջողվում ամբողջովին ու լրիվ իրազորձել Աշխատանքի Որենսգիրքը : Յերբ, որինակ, կարմիր բանակին անպայման ավելի շատ հաղուստ ու պատրաստություն եր պետք, ավելի շատ մթերքներ՝ յերկրի քաղցած աշխատավոր բնակչությանը, բանվորը հաշվի չեր առնում աշխատանքի պաշտպանության նորմաներն ու կանոնները : Նաստիպված եր վոչ թէ 8 ժամ աշխատել, այլ նշանակալի չոփոյ շատ, աշխատել սոված աշխատավարձով, չնչին բաժնեմասով (ուայ), հաճախ ամենավատ առողջապահական պայմաններում (վորովհետեւ վոչ նյութեր, վոչ ել միջոցներ կային այդ պայմանները լավացնելու համար) : Բայց նա շարունակ հաստատ գլխակցում եր, վոր այդ զրկանքներն ու զոհերն այժմ շահագործող կապիտալիստի համար չե կրում, այլ աշխարհի առաջին բանվորագյուղացիական հանրապետության, Խորհրդային Ռուսաստանի ամբողջ բանվոր գասակարգի համար, վորին այդպիսով նա ողնում է ճանապարհ հարթել գեպի լավագույն ապագա : Խորհրդային ար-

Հետակցական միությունները համաձայնվում ելին Աշխատանքի Արենսգրքի ժամանակավոր, անհրաժեշտ դանցառումներին, Հիսուսի հասկանալով, վոր այլապես հակածեղափոխության հաղթունակի, կալվածատերերի և գործարանատերերի հազթանակի գեղքում, աշխատանքի պաշտպանության ասպարիզում ձեռք բերած բոլոր նվաճումները կը խլվելին բանվոր գասակարգից :

Նոր տնտեսական բազականությունն այդ բանոր բրությունը փոխեց : Քաղաքացիական պատերազմը վերջացավ : ԽՍՀՄ բանվոր գասակարգը հաղթելով, խաղաղ չինարարության անցավ : Պետական արդյունարերությունը սկսեց վերածնվել, հետևաբար հնարավորություն ստեղծվեց բավացնելու պետական բազայի բանվորների նյութական գրությունը : Սրա հետ միաժամանակ մասնավոր կտողիտայի վերականգնումը, վիճակը տնտեսատեր—վարձակալների յերեան գալը, վորոնք հենց սկզբից փորձեցին սեղմել իրենց բանվորներին շահագործման ձիրաններում, աշալուրջ ուշադրություն եր պահանջում բանվորական պետության կողմէց : Նորից ամբողջ լայնությամբ կանգնեց մեր առաջ Աշխատանքի Արենսգրքը խնամքով ու լրիվ կատարելու հարցը : Մասնավորապես փոխվեցին բանվորների նյութական շահերի պաշտպանության յեղանակները, յերեան յեկան համարական պայմանագրերը և Աշխատանքի Արենսգրքում համապատասխան դրույթը նրանց մասին :

Նոր տնտեսական բազականության շրջանում աշխատանքային պարեւելը այլևս անպիտք եր : Պետական բազայի ձեռնարկությունների շտաների կրծատումը, մի շարք մնասարեր գործարանների և Փարբեկանների փակումը, նույնական և աշխատավարձի տուրիճանական աճումը և վորակյալ բանվորների գյուղից քաղաք հետ գալը—այդ բոլորը պայմանավորեցին գործադրիւթյան աճումը : Բանվորական ձեռնքերի վոչ թե պակաս, այլ առատություն եր : Իսկ ինչ վերաբերում ե անաշխատ բնակչությունը, ապա նրա վերաբերյալ ել. վոչ մի միաք չուներ աշխատանքային պարհակ պահելը : Այլապես այլէ կնշանակեր, վոր Խորհրդադային իշխանությունը պարտավորություն և ստանձնում աշխատանք տալ և ապահով գտնում ամեն մի բուրժուայի, մինչդեռ նա իվիճակի չե բոլոր արմատական աշխատավորների բանվորների և ծառայողների լրիվ աշխատանքն ապահովել : Յեկէ ի հարկե բուրժուապիտայի շահերի ույսպիսի անտեղի հոգատարությունը Խորհրդադային իշխանությունը դեն չպրտեց :

Կազմակ շինարարության պայմաններում հնարավոր գարձավնակ աղասակը գյուղացիությանն աշխատանքային պարհակի չափողակաց ծանրություններից : Ի վերջո 1921 թ. Հրատարակված նոր Աշխատանքի Որենագրքում նախատեսվում է, զոր ԽՍՀՄ քաղաքացիներն աշխատանքի պարհակ կատարելու յին կոչվում «բացառիկ գեղեցիկում» (կուի տարերային աղետների դեմ, բանվարական ուժի պակաս՝ կարեղուազույն պետական առաջադրաւթյունները կատարելու համար)», որինակ, յերկաթուղային ճանապարհները ձյունի տակ թաղվելու գեղգում, հեղեղման գեղքում, յերկրի պաշտպանության համար շատակ միջոցներ ձեռք տոնելու անհրաժեշտության գեղքում և այլն : Իսկ առօրաբար, բատ նոր Աշխատանքի Որենագրքի, բանվորն աշխատանքի յի մտնում կամավոր վարձման կարգով :

Ուրեմն քայլ տո քայլ հետեւնք, թե համաձայն Աշխատանքի Որենագրքի ինչպես և տեղի ունենում բանվորների վարձումը և ապա ինչպես և հենց ձեռնարկության մեջ Որենագիրքը աշալքութեն պաշտպանում բանվորի նյութական և իրավական շահերը :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱՐԱԿ : Այցելենք բանվորական խոչոր կենութիքների բջուրից մեկի Աշխատանքի Բորսային կից գորևե միջնորդ բյուրո, թեկուզ մետաղագործների միջնորդ բյուրոն : Այսոր աշխատանքի ուղարկելու համար կանչել, վորովհետո «Պարփղի Կոմմունայի» անվան գործարնեց յերեսուն մարդու պահանջ և ստացվել : Միջնորդ Բյուրոյի վարիչը գործարանի վարչության ներկայացուցչի մասնակցությամբ հարց ու փորձի յենթարկեց և ջոկեց բանվորներին, վորոնց թվում նաև յերկու ճախարակադրծի, Պապիկյանին և Գալստյանին : Գործարան գնայիս յերկու ճակարակադրծը (տօքար միասին և իմ գնումը : Պապիկյանը խոսակցության բռնվեց ընկերակցի հետ :

— Ճիշտն ասած, յես արդեն հոյսոս կարում եյի : Զե՞ վարայժմ հին Աշխատանքի Բորսան չե, այլ միջնորդ Բյուրո : Ցնաեական վարչությունը յեթե ուզի, քեզ Բյուրոյի միջոցով կը վարձի, իսկ յեթե չուզի, կարող ես ամիսներով թրել դալ :

Գալստյանը, վոր հասակավոր բանվոր եր, իր ժամանակին աշխատել եր վոչ միայն Ռուսաստանի, այլև Գերմանիայի ու Անգլիայի խոշորագույն գործարաններում, ակնոցների միջով ուշադրությամբ նայեց Պապիկյանին :

— Ինչպես յերգում և գու նախկին կարգերին լավ ծանոթ չես : Մենք հենց դրա համար հրաժարվեցինք աշխատանքի վարձման պարտադիր կարգից , զորպեսզի ավելի շատ և ավելի լավ կարողանանք մեր գործազուրկներին դատում տալ : Մինչև միջնորդ բյուրոների կազմակերպվելը , գործն ավելի վատ եր , բայց այդ յերկար պատճություն ե : Կուզե՞ս , պատմեմ :

— Պատմի՞ր , խնդրեմ :

— Այս , այսպես—Աշխատանքի Բորսաները , վոր իրենց աշխատանքը ծավալեցին դեռ նոր տնտեսական քաղաքականության սկզբին , ժամանակին մեծ գործ կատարեցին : Նրանք սկսությանը թույլ եյին տալիս ավելի լավ հետեւ բանվորական ուժի ճիշտ բաշխմանը , յերկրորդ , աշխատում եյին վորպեսզի ավելի կարեքավոր և ավելի փարծ բանվորներն առաջին հերթին աշխատանքի մանեն , վոր կամայականություն չը լինի վարձողների կողմից , հատկապես մամնավոր փոքրիկ տնտեսատերերի կողմից : Սակայն շուտով Աշխատանքի Բորսաներն անկարող հանդիսացան , ինչպես հարկն ե , այդ գործը գրությանել :

Բանն այն ե , վոր գործազրկությունը մեղ մոտ , Խորհրդային Միության մեջ բոլորովին ուրիշ ծագում ու բնույթ ունի , քան բուրժուական յերկրներում : Որինակ՝ Անդիմայում գործադրությունների թիվը մոտ 1,500,000 ե , բայց անգլիական գործազրկությունն առաջացել է նրանից , վոր չեն աշխատում շատ մանածակործական գործարաններ , մի շաբաթ նավաշինարարական վերֆեր , ընդհանրապես լճացում և նկատվում անգլիական տնտեսության մի ամբողջ շաբաթ ճյուղերում : Ընդհակառակը , մեզ մոտ 1923 թ . արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը նշանավոր չափով ամբացան 1924 թ . և այժմ , 1925 թ . նրանք նոր թոփչք արին գեղի առաջ , Փարբիկաններում և գործարաններում , նույնպես և գյուղատնտեսության մեջ զրազված բանվորների քանակը աճել ե , բայց միենույն ժամանակ նշանավոր չափով աճել ե նաև գործազրկությունը : Այս աճման գլխավոր պատճառն այն ե , վոր բանվորական ուժի հոսանքը զյուղից բաղադր ուժեղացել ե : Մեր գյուղական բնակչությունը տարեկան 1 ու կես միլիոն մարդով չատանում ե , նրանք բոլորը գյուղում աշխատանք գտնել չեն կարող և նրանց մի մասը ճանապարհ ե ընկնում քաղաք , վորտեղ , բացի այդ , բանվորների աշխատավարձը ավելի բարձր ե և կյանքի պայմաններն ավելի լավ : Բայց մեր արդյունաբերությունը , չնայած իր բոլոր

Հաջողություններին (1924 թ. հասավ մինչպատերազմական մակարդակի 42% և 30% առաջ ընկավ 1923 թ.), այնուամենայնիվ բավականաչափ արագ չի աճում: Նա կարող է ընդգրկել միայն 300-400 հազար նոր բանվոր: Դուրս մնացածների մի նշանագործ մասը գրվում եր Աշխատանքի բորսայում: Ապա գործազուրկների մեծ քանակը եր տալիս մեր խորհրդային հիմնարկությունների շտատների կրծատումը, վոր կատարվեց հաստատում համապետական բյուջեի անցնելիս: Աճում է յերիտասարդությունը և լցնում է գործազուրկների շարքերը, այնտեղ են լցվում նաև կարմիր բանակից զրացրվածները: Վերջապես, հաստուկ կարևորություն ուներ նաև հետեւյալը — Նախկին Աշխատանքի բորսան բնակարանի համար գործազուրկների մի նշանագործ մասին արտօնություն տալիս եր, ջրի ու լուսի համար ել նրանք չնշին գրոշներ ելին վճարում, նպաստ ելին ստանում ապահովագրական դանձարկդից: Այդ արտօնությունների չնորհիվ Աշխատանքի բորսան ըլջապատված եր հազարավոր կեղծ «գործազուրկներով», ծածուկ առեւրականներ, սպեկուլյանտներ, վորոնք վոչ թե աշխատանք ելին վիճակում, այլ ուզում ելին ապահովել տուրքերից, բնակարանային վարձից և այլն:

— Ի՞նչ գրության մեջ ընկան շուտով Աշխատանքի բորսաները: Յուցակագրվածների ամբողջ հսկայական մասսայից նրանք պետք է կարգանային ընտրել մեր ձեռնարկությունների ու հիմնարկությունների համար ամենից ավելի արժեքավոր, վարժ և պետքական բանվորական ուժը: Խնամքով ընտրանք եր հարկավոր, վորովհետեւ անտեսական հաշվի անցած մեր արդյունաբերությունը հետզհետեւ սովորեց ավելի հմտորեն ընտրել իրեն պետք յեղած բանվորները և ծառայողները: Սակայն աշխատանքի բորսան վյուղի և քաղաքի գործազուրկ մասսաների նորանոր անընդհատ հեղեղից քըված, «արտօնություն ունեցողներով» խեղդված, պարզապես լուզում եր հոսանքի ուղղությամբ: Նա սկսեց զրադվել միայն գործազուրկների հաշվառումով և վերահաշվառումով, ներկայացողների ստուգումով (յեւկա), ցուցակագրումով ու վերացուցակագրումով: Դրա հետ միասին ստիպված եր կարգի դժել գործազուրկների ողնության գործը, միջոցներ վորոնել նպաստների, հասարակական աշխատանքների համար և այլն: Փօխանակ բավականաչափ ձկումություն յերեւան բերելու բանվորական ուժի ընտրության գործում, Աշխատանքի բորսայի ապահուածը չինովնիկարար եր

աշխատում, տուաց շատապելու: Իրոք, ինչո՞ւ ջանք թափել, յերբ
առանց Աշխատանքի բարսայի վոչ վսք աշխատանքի ձոնել չի կա-
րող: Աշխատանքի ուզարկելը կատարվում էր հասարակ ու պատա-
հական հերթի կարգով, իսկ ձեռնարկություններն ու հիմնարկու-
թյունները զբա փոխարեն Աշխատանքի բորսային հատուցում էյլին
նրանով, վոր ճգնում եյին ավելի լավ դանց առնել նրան: Այդպիսի
զբությունը չեր կարող յերկար շարունակվել: Պետք էր . . .

— Միջնորդ բյուրոներին անցնել:

— Այո՛, հենց այգակես, միջնորդ բյուրոններին անցնել: Ի՞նչպես
ե աշխատում այդպիսի բյուրոն: Առնենք, որինակ, մետաղագործ-
ների միջնորդ բյուրոն: Եա բոլոր մետաղագործ բանվորներին ցու-
ցակագործ և ըստ արհեստների ու մասնագիտությունների: Յեթե
վարձողին բանվոր և պետք, նա գալիս և միջնորդ բյուրոն է ինքնի իր
համար ընարում և ճախարակագործ, զարրին, վականագործ
(ըլեսար) և այլն: Համաձայնությունը կամավոր և յերկու կողմի
համար: Գործազուրկը կարող և ընդունել առաջարկը և կարող և
յընդունել: Առաջ աշխատանքից հրաժարվելու դեպքում, գործա-
զուրկը Աշխատանքի Բորսայի հաշվառումից հանդում եր, իսկ
այժմ, իհարկե այդ չկա: Իր կողմից վաճողը կարող և միջնորդ
բյուրոյում հաշվառած վորե բանվորի հետ համաձայնության
դաշ, բայց կարող և բանվոր վարձել նաև առանց միջնորդ բյուրոյի:

— Լավ, բայց ինչո՞ւ համար և այն ժամանակ միջնորդ բյուրոն:

— Ահա թե ինչու համար — Այժմյան Աշխատանքի բորսան,
որա ապարարար և միջնորդ բյուրոնների ապարար ճգնում են
իրենց աշխատանքն այնպիս զնել, վոր վարձողի համար ոգտակառ
լինի միջնորդ բյուրոն դիմելը: Դրա համար միջնորդ բյուրոն խը-
նումքավ ցուցակագրվածների թվոց ընտրում և ամենավարժ բան-
վորներին, ստուգում և նրանց վորակումը, այլպիսով աշխատանքի
ուզարկելիս իր վրա վարչ պատասխանատվություն և վերցնում
իր առաջարկած բանվորակն ուժի վորակի համար: Ասպա նաև միջ-
նորդ բյուրոն արգեն չի ծանրաբեռնված կեզծ զործագուրկներով,
ցորովհետեւ բյուրոյում ցուցակագրվելով գործազուրկն այլիս վոչ
մի արտօնություն ձեռք չի բերում, վոչ տուրքերի վիարման, վոչ
ել բնակարանային վարձի մեջ:

— Իսկ ի՞նչ անի իսկական գործազուրկ-չունեուրը: Զե՞ նա չի
կարող բարձր կոպարներով վճարել:

— Կո՞չ, այդպիսի գործազուրկներն արտօնություններ են

առանում համապատասխան որդանների-արհմիությունների, բան-փորական բնակարանային կոոպերատիվների վարչությունների և այլն, վարուչումների հիման վրա, յիթե նրանց հաջողվի պատաս-թթվերով կամ վկանների հարցաքննության միջոցով ցույց տալ, վոր իրանք առաջ վարձով աշխատել են, իսկ այժմ կողմանկի զատում-ներ չւնեն և կարիքի մեջ են: Բայց միջնորդ բյուրոներն այստեղ գործ չունին: Նա իրավունք չունի զործազուրկների ձեռքը վոչ մի տասն կամ վկայական տալու: Իհարկե, չի կարելի առել, վոր մեր միջնորդ բյուրոներն արգեն, ինչպես հարկն և, կատարում են իրենց աշխատանքը, կարողացել են բավականաչափ վատահութայն և ուշադրության արժանանալ տնտեսական որդանների կողմից: Բայց անտեսական որգանները պարտավոր են յերեք ամիսը մեկ միջնորդ բյուրո ուղարկել իրեց ընդունած բանվորական ուժի քա-նութիւն մասին ամփոփ տեղեկություններ և ահա բանից յերեսում և, վոր անտեսական որգանները մեր քաղաքում դեռ բանվորների կե-սից ավելին ընդունվում են առանց միջնորդ բյուրոյի, հաճախ վոչ միության անդամներից:

— Իսկ ի՞նչ պետք է անել:

— Ահա այսեղ մեծ աշխատանք կա մեր արհեստակցական կաղ-մակերպությունների, հասկապես նրանց ստորին բջիջների-գոր-ծարկումների տաղ: Անհրաժեշտ և, վոր նրանք ինսամքով հետեւն հավաքական պայմանագրի այն կետի կատարմանը, վոր տառը և. Հավասար վորակման ժամանակ առաջին հերթին աշխատանիքի պիտի ընդունվեն արհմիությունների անդամները: Բացի այդ, միությունները հոգում են հենց միջնորդ բյուրոների կանոնավոր աշխատանքի մասին: Մասնավորապես միջնորդ բյուրոների վարիչ-ներն առաջ են քաշում համապատասխան միությունների կողմից:

— Լա՛վ, յիթե զործազուրկը միության անդամ և, միությունն այն ժամանակ նրան իր պաշտպանության տակ և տոռում: Իսկ յիթե, որինակ, մասնավոր վորքիկ տնտեսատերը բանվոր վարձի, վորը միության ադամ չե: Չե՞ վոր այդ ժամանակ նա կարող և բան-փորին ազատ շահագործել:

— Սխալ է: Մենք ունենք Աշխատանիքի նրենսգիրք, վոր պաշտպա-նում և ամեն մի բանվորի իրավունքն անկախ այն բանից, միության անդամ և նա, թե վոչ, վարձված և միջնորդ բյուրոյի միջոցով, թե առանց նրան: Իսկ յիթե տնտեսատերը կնեղի բանվորին, նրան կը հորկադրի արտաժամյա աշխատանք կատարել կոմ կոկսի անչա-

փահաս-աշկերտներին չարչարել, բանվորը պետք է միությանը գիմի: Այստեղից ուղարկում են լիազորին, ապա դալիս և աշխատանքի տեսուչը, իսկ հետո արդեն գործը վերջանում է ժողովը-դական դատարանի աշխատանքային նստաշրջանում: Իսկ ինքը բանվորը միությունից ոգնություն ստանալով, շուտով կհասկանա, թե ինչու պետք է ինքը միության անդամ լինի: Ընդհանրապես մեզ մոտ, բայց արագուղացիական պետության մեջ աշխատավորների դրությունը բուրութին այլ և, քան բուրժուական յերկրում: Արևմուտքում ել Աշխատանքի բորսաներ, միջնորդ բյուրոներ կան: Որինակ՝ յես յեղել եմ Գերմանիայում, Զոլլնդեն քաղաքում: Աշխաթե ինչպես և կազմակերպված Աշխատանքի Բորսան: Աշխատանքի Բորսան կառավարում է մի հանձնաժողով, վոր կազմված և կիսով չափ միությունների, իսկ կիսով չափ ել ձեռնարկունների ներկայացուցիչներից, քաղաքային ինքնավարության ներկայացուցիչ նախագահությամբ: Իսկ Անգլիայում Աշխատանքի Բորսաները պետական են, բանվորները նրանց վրա առանձին սպառցություն չունեն:

Իսկ ի՞նչ ե լինում վերջը: Բուրժուական յերկրում թե կառավարությունը և թե քաղաքային ինքնավարությունը կապիտալիստների կամքն են կատարում: Այնպես և լինում, վոր Աշխատանքի Բորսան ձեռնարկության մեջ գործադուլի գեղքում, նոր բանվորներ և ուղարկում այսեղ, այսինքն շարել կերենքներներ (գործադուլ խախտողներ). Ընդհանրապես Աշխատանքի Բորսաները հաճախ ձեռնարկություններ են ուղարկում այն գործազուրկներին, վորոնք համաձայն են ամելի վասարայիններով աշխատել, քան այն սպայնանները, վորոնց հասել են ավյալ ձեռնարկության բանվորները: Գոյություն ունեն այսինքն միջնորդ բյուրոներ ել, վոր Հենց իրենք ձեռնարկուններն են ստեղծում և, իհարկե, հավատով ու ճշմարտությամբ ծառայում են նրանց շահերին: Որինակ, Նյու-Յորկում բավական և, վոր բանվորը անտեսատերի առաջ հեղափոխական ագիտացիայով կամ գործադուլին մասնակցելով «հանցանք գործի», նա այլևս ամբողջ Միացյալ Նահանգներում աշատանք չի գտնի: Ձեռնարկունների միջնորդ բյուրոներում, նույնպես և Ամերիկայի բոլոր արեստներում և խոշոր ձեռնարկություններում դրա համար կան, այսպես կոչված, «սե ցուցակներ», վորոնց մեջ մտցնում են կապիտալի համար վոչ ողտակար բոլոր «խոռվարաններին»: Այդպիսի ցուցակներ պահպան եյին նաև մեզ մոտ ցարական Ռուսաս-

տանում : Խհարկե , այժմ ամեն ինչ այլ ձևով և ընթանում միեղ մոտ միջնորդ բյուրօները պեսական են , մասնավոր անձինք կամ տոանձին կազմակերպությունները շն կարող այդպիսի բյուրոներ բաց անել : Մեկ ժոտ ինքը պետությունը բանվրագյուղացիական է : Աշխատանքի Բորսաները յենթարկվում են տեղական աշխատանքի բաժիններին , վորոնք աշխատում են սերտ կապ պահելով արհմիությունների հետ : Արինակ՝ մեր քաղաքի Աշխատաքի Բորսայի վարիչն առաջ և քաշված տեղական նահանգական Արհեստակցական Խորհրդի կողմից : Աշխատանքի Բորսայի կոմիտեյում արհմիությունների ներկայացուցիչների թիվը հավասար է տնտեսական ներկայացուցիչների թվին (իհարկե խորհրդային անտեսաբարին հարկ է համեմատելու ստարերկրյա կազմականի հետ) և բացի այդ , Աշխատանքի Բորսայի կոմիտեյի նախագահը միության առաջ քաշված բյուրոյի վարիչն է : Վերջապես , բանվորների շահերի վրա հակում և Աշխատանքի Արենագիրքը : Ինչ յեղանակով եւ վոր բանվորն աշխատանքի մասի և ում մոտ եւ վոր աշխատելու լինի , նու Արենագիրքի պաշտպանության տակ է : Տարբերությունը հասկացա՞ր , բարեկամու :

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅ-

ՄԱՐԿԵԴԻԲ .

Փորձի սովորական վեց որն ան-
տանքի ընկալուց հետո Պատիկյանը աշխա-
տանքի ընդունվեց^{*}) նրան հաշվե-
դրքույկ տվեցին^{**}) : Աշխատանքի մանելով , Պատիկյանը ձեռնորդ կության վարչության հետ անձնական աշխատանքային պայմանա-
գիր կնքեց վարձման մասին : Եկվ քանի վոր մենագաղործների արհ-
միությունը արեսար հետ հավաքական պայմանագիր և կնքել «Պա-
րիզի կոմունայի» անվան գործարանի մասին , ապա Պատիկյանի
անձնական պայմանագրի բոլոր բարմանները սահմանվում են միու-
թենական այդ հավաքական պայմանագրի հիման վրա : Այն կարող ,
վորով պետք և անցներ Պատիկյանը , նրա աշխատավարձի շափը և
այլն , այդ բոլորը նշանակված և ընդհանուր հավաքական պայմա-
նագրում : Իսկ Պատիկյանի հավելությունը կը հենց նրա համար ուղ-
վեցին , վոր նա լավ խմբնա իր պայմանագրի բոլոր պայմանները :
Ավագ ժամանակ Պատիկյանի վարույթը մեր հաշվեդրույթով առուղել :

*) Արենագիրքի հոդ . 38 :

**) Արենագիրքի հոդ . 29 :

թե արդյոք ճիշտ են հաշվում պնահատումները, արդյոք ճիշտ են տալիս նրա աշխատավարձը և այլն :

Այսպիսով՝ Պապիկյանը «Պարիզի Կոմմունայի» անվան գործարանում գտնվում է հավաքական պայմանագրի պաշտպանության տակ : Բայց ի՞նչ կլիներ, յեթե նա մաներ մի ձեռնարկություն, վորտեղ հավաքական պայմանագրի չկա կամ մասնավոր տնտեսատիրոջ մոտ, վոր խուսափում է հավաքական պայմանագրից : Այդ առթիվ, Աշխատանքի Որենսգիրքը § 4 նախատեսնելով նման դեպքեր, մատնանշում ե, վոր «աշխատանքի բոլոր պայմանագրերը և համաձայնությունները, վորոնք ներկա Որենսգրքի վորոշման համեմատությամբ վատացնում են աշխատանքի պայմանները, անվավեր են» : Բացի այդ, Որենսգիրքը հետագա § 28 մեջ ե'լ ավելի մանրամասն հիշատակում ե, վոր չնայած աշխատանքային պայմանագրի պայմանները վորոշվում են կողմէնքի համաձայնությամբ, սակայն «անվավեր են աշխատանքային պայմանագրի այն պայմանները, վորոնք Աշխատանքի Որենսգրքի սահմանած պայմանների, հավաքական պայմանագրի պայմանների ու տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության վրա տարածվող ներքին կարգի կանոնների համեմատությամբ վատացնում են աշխատավորների դրությունը, նույնպես և այն պայմանները, վորոնք հակած են աշխատավորների բազական կամ ընդհանուր բաղաբացիական իրավունքները սահմանափակելու» : Հետեաբար, յեթե մասնավոր ձեռնարկուն պահանջներ Պապիկյանից որական վոչ թե 8 այլ 9 ժամվա աշխատանք, հրաժարում արձակուրեցից, պարտավորություն միության անդամ ըլինելու և այլն, ապա Որենսգիրքը այդ բոլոր պայմաններն անվագեր և հայտարարում, յեթե նույնիսկ ինքը Պապիկյանը այդ դիցուժներին համաձայնվեր ել :

Պապիկյանը ճախարակագործ ընդունվեց և աշխատանքի անցալիք համբարության մեջ : Յեթազենք, վոր այս կամ այն պատճառով Պապիկյանին հարկավոր եր մի քանի որ գործարանից հետանալ ու նա մտածեր իր աշխատանքը հանձնարարել սեփական ընտրությամբ հրավիրած մի ուրիշ բանվորի : Վորովհետեւ այդ կարդ և վնասակար լինել ձեռնարկության համար, այդ պատճառով Աշխատանքի Որենսգիրքն այլպիսի դործարքներն արգելում են^{*}) : Յեկը հակառակը, գործարանի վարչությունն իրավունք չունի ճա-

*) Որենսգիրքի հոդ. 35 :

խարակագործ Պապիկյանից պահանջել, վոր նա այլ, որինակ ձու-
լիչ պարտականություններ կատարի, վորոնց համար նա չի
վարձվէլ: Բացի այդ, վոչ վոք չի կարող Պապիկյանին այնպիսի
աշխատանք հանձնարարել, վոր վտանգավոր ե կյանքի համար, որի-
նակ, միակատար ընթացքի ժամանակ մեքենայից դուրս քաշել պակ-
ված փոկը և այլն և ընդհանրապես այնպիսի աշխատանք, վոր չի
համապատասխանում Աշխատանքի Որենսգրքին*):

Սակավ դեպքերում թույլատրվում են բացառություններ,
այսինքն՝ «յերք այդ անիրաժեշտ և սպանեացող վտանգը կանխելու
համար, վարձվածին կարելի յի հանձնարարել որիշ տեսակ աշխա-
տանք, թելուզ և այդ նրա վորակմանը չհամապատասխան»: Այսպես, որինակ, Պապիկյանը բացի ճախարակագործությունից
կարող և ժամանք ծանոթ լինել ըստեկաթսաների հետ: Գործարանի
մեխանիկը կարող և պատահարար յերկար ժամանակ բացակայել և
չնկատել, վոր կաթսաներում ջուրը քիչ և, իսկ ճնշումը չտիպա-
գանց մեծ: Այդ դեպքում, յերք կաթսաներին պայթելու վտանգ և
սպանում և վոչ վոք չկա, վոր նրանց վրա հսկի, վարչությունն ի-
րավունք ունի Պապիկյանին ժամանակավորապես կաթսաների մոտ
ուղարկել: Յեթև Պապիկյանը ժամանակավորապես ցած վորակման
աշխատանքի յի գրվել ավան ճախարակագործականը, այն ժամանակ
աշխատավարձը, ըստ Որենսգրքի § 36, չի կարող քչացվել: Իսկ յե-
թև, ինչպես ներկա դեպքում կաթսաների գործում, «ժամանակավոր
աշխատանքն ավելի բարձր ե վարձատրվում, քան այն, վորի հա-
մար հրաժիրված և վարձվածը, առա վարձատրությունը տեղի յի
ունենում ըստ բարձր կուպարի», այսինքն ճախարակագործ Պապիկ-
յանը վարձատրվում և մեխանիկի կոպարով:

Ժամկեաով կնքված աշխատանքային պայմանագիրը, որինակ,
հյուսն բանվորի հրավիրումը Յ ամսով, տվյալ ժամկետի լրանո-
լուց հետո ջնջվում է: Իսկ յեթև Յ ամսոց հետո ել վարչությունը
բանվորի հաշիվները չի մաքրում, իսկ ինքը բանվորն ել նույնական
չի ուղղում հատանալ, այն ժամանակ ըստ Որենսգրքի § 45 «պայմա-
նագիրը նախկին պայմաններով, անորոշ ժամկետով շարունակված
և համեաչվում»: Բայց յենթաղրենք, հույսն բանվորը, վոր գեռ մեկ
և կես ամիս և աշխատել, ուղղում է ճնշոնարկությունը թողնել, ըստ
Որենսգրքի § 46 նա իրավունք ունի աշխատանքային պայմանագիրի

*) Որենսգրքի հոդ. 36:

լուծումը պահանջել «ամեն ժամանակ, բայց պարտավոր ե նախագործացնել վարձողին՝ շարարական հաշվեհարդարի ժամանակ վոչ պակաս . քան 1 որ առաջ, իսկ յերկշաբարյա կամ ամսական հաշվեհարդարի ժամանակ վոչ պակաս քան 7 որ առաջ»: Ընդ ամին, իհարկե, բանվորն այդ գեղքում յերկու շարաթվա դատումի չափով արձակման հասուցում (в выходного пособия) չի ստուգում:

Աշխատանքի Արենսդիրը ամենախիստ կերպով հիշատակում է այն բոլոր գեղքերը, յերբ անհրաժեշտ և բանվորի շահերի հատուկ պաշտպանությունը վարձողի հնարավոր քմահաճույքից, այսինքն այն դեպքերը, յերբ բույլատրվում ե բանվորի արձակումը, յերբ մի բուրժուական յերկրամատ տնտեսատիրոց սեփական հայեցալությամբ բանվորին արձակելու իրավունքը կապիտալիստների «սրբազնությամբ» իրավունքից մեկն ե համերիսում: Իր ժամանակ կերենսակառ մանր-բուրժուատկան մենչեւ իդ-եներական կառավարությունը չհամարձակվեց փորձ անել կապիտալիզմի այս յուրատեսակ հիմքը տապալելու: Ժամանակավոր կառավարության որենքներով, քրեյական պատմի սպառնալիքով դործարկումներին արդելվում եր վարձման և արձակման դործին միջամտել: Խորհրդային յերկրում, ի հարկեն, կարգերն ուրիշ են — բանվորական պետությունը Աշխատանքի որենուրբառում սահմանում և բանվորական ուժի վարձման հմտություն կանոնները, նույնքան ել հաստատուն կերպով վերապահում և նրա արձակման պայմանները: Աշխատանքի Արենսդիրի § 36, 37 և 47 հիման վրա անորոշ ժամկետով կնքած աշխատանքային պայմանագիրը կամ ժամկետային պայմանագիրը, մինչեւ նրա ժամկետի լրացումը, կարող են լուծվել վարձողի պահանջով միայն իիսա վորոշյալ գեղքում (տես սխման):

Բայց կարող ե պատահել, վոր վորեն մասնավոր տնտեսատեր կամ, առանձին գեղքերում, բյուրսկրատացած տնտեսավար ցանկանա ձեռնարկությունից քչել իր համար անսպահակար դործարկումի անդամին, վոր չափազանց կրակու սպաշտավանում և բանվորնեցի շահերը: Այդ գեղքում Աշխատանքի Արենսդիրի § 160 միության աշխատանքը ցնցումներից պաշտպանելով, թույլատրում և դործարկումի կամ այլ միութենական օրդանի անդամի արձակումը «միայն համապատասխան արիետակցական (արտադրական) մրության համաձայնությամբ»:

Իսկ ինչ վերաբերում է պայմանագրի վաղաժամ լուծմանը

վարձիողի կողմից, ապա այդ հնարավոր ե օ գեղքում (տես սխալ մաս) :

Վերջապես, համաձայն Արենադրքի § 49 ամեն մի աշխատանքային պայմանագիր կարող է լուծվել նաև միության պահանջով, որինակ, յեթե ձեռնարկության մեջ տանց Աշխատանքի Բորսայի ընդունված լինի միության անդամ՝ այն ժամանակ, յերբ միությունը հավասար վորակման բավականաչափ զործագուրկներ ունենա: Այդ դեպքում արձակվածին հաստուցում չի տրվում արձակման համար: Յեթե վարձողը համաձայն չե միության այդպիսի պահանջին, նա կարող է կոնֆլիկտային կարգով գանդատարկել այն: Կոնֆլիկտային կարգով են վճռվում նաև այն դեպքերը, վոր նախատեսնված են 48-րդ Հոդվածի ա, բ և գ կետերում, յերբ ձեռնարկության մեջ զանազանիւշ-կոնֆլիկտային հանձնաժողով:

Ավելորդ չի լինի հենց այսուհետ մտարերել, թե հավաքական պարմանագիրը ինչ լրացումներ և մտցնում բանտորների վարձման ա արձակման մեջ^{*}) :

Արձակման հրեհն Կորի հողի առաջած:	Ի՞նչ ԴԵՐՔԵՐՈՒՄ ՎԱՐՁՈՂԸ ԿԱՐՈՂ Ե ԱՐՁԱԿԵԼ ԲԱՆՎՈՐԻՆ	Արձակման պարմանագիրը Կորի հողի առաջած:
36	Յեթե ձեռնարկության մոջ ժամանակավագիր չը կա այն աշխատանքը, վորի համար բանվորը հրավիրված է (որինակ՝ ժամանակագործական դադասները կոտրվել են) և յեթե բանվորը չի համաձայնվել, նույն վորակման մի ուրիշ աշխատանքի անցնել:	Տրվում է յերշակագրաթիւ կու շաբաթի ժամանակագործական դադասների վոր (հողված 89):
37	Յեթե բանվորը չի համաձայնվել իր մասնագիրությամբ աշխատելու համար սի ուրիշ ձեռնարկություն փոխադրվել կամ թեկուզ ձեռնարկության հետ միատեղ փոխադրվել մի ուրիշ քաղաք կամ վայր:	Նույնը (հոդ. 89):
37 ա	Յեթե ձեռնարկությունը լրիվ կամ մասնակի կերպով փակվում է կոմ յեթե նրանում աշխատանքը կրճատվում է:	Նույն (հոդ. 88):

*) Ճես «Ի՞նչ ե հավաքական պայմանագիրը»:

Աշխարհական պահելու համար գործությունների առաջնահատ պահելու համար գործությունների առաջնահատ	Ի՞նչ դեղքերում ՎԱՐՁՎԱԾ ԲԱՆՎՈՐԸ ԿԱՐՈՂ Ե ՎԱՂԱԺԱՄ ՀԵՌԱՆԱԼ ԱՇԽԱ- ՏԱՆՔԻՑ:	Արքական համար գործությունների առաջնահատ պահելու համար գործությունների առաջնահատ
47 թ	Յեթե հում նյութ, վառելիք չինելու և նման այլ արտադրական պատճառներով ձեռնարկությունը կանգ ե առնում ավելի քան մեկ ամիս:	նույնը (հոդ. 88):
47 դ	Յեթե պարզվի, վոր բանվորն անպետք ե կատարելու այն աշխատանքը, վորի համար վարձվել ե (այն պայմանով, վոր այդ հաստատի նաև Գնահատիչ-կոնֆ. հանձ):	նույնը (հոդ. 88):
47 դ	Յեթե բանվորը սիստեմատիկորեն առանց հարգելի պատճառների իր պատականությունները չեն կատարում և այդ ընդունակած ե նաև Գնահատիչ-կոնֆ. հանձնուժովի կողմից:	Արձակման հատուցում չկարգում (հոդ. ված 90):
47 յի	Յեթե բանվորն իր աշխատանքի հետ կապված հանցանք ե գործել (գողություն արհեստանոցից: Պաշտոնին վերաբերյալ կեղծիք և այլն), վոր հաստատված ե դատական վճռով և որինական ուժի մեջ և մտել, նույնպես և այն դեպում, յեթե բանվորը կալանավորվում ե 2 ամսից ավելի:	նույնը (հոդ. 90):
47 դ	Յեթե բանվորն առանց հարգելի պատճառների իրար հետեւից աշխատանքի չի դալիս ավելի քան 3 որ կամ ընդհանուր առմամբ ամիսը ավելի քան 6 որ:	նույնը (հոդ. 90):
47 ե	Յեթե բանվորը ժամանակավոր անաշխատունակության հետեւանքով (հիվանդություն, խեղություն) աշխատանքի չի հաճախում ավելի քան 2 ամիս կամ յեթե կինբանվորուհին հղության և ծննդաբերու-	նույնը (հոդ. 90):

	ԻՆՉ ԴԵԹՔԵՐՈՒՄ ՎԱՐՁՎԱԾ ԲԱՆՎՈՐԸ ԿԱՐՈՂ Ե ՎԱՂԱԺԱՄ ՀԵՌԱՆԱԼ ԱՇԽԱ- ՏԱՆՔԻՑ,	Արձակագույն համարակալիք և առաջարկութեան համարակալիք
48 ա	<p>Թյան ժամանակ աշխատանքի չի գտվու ավելի քան 4 ամիս:</p> <p>ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ—Հեղինակն արձակման այս սխեման փոխ և առել Բիխովսկու «Ենչ իրավունք- ներ և տալիս Աշխատանքի Որենսդիրքը» գրքու- ից, վորոշ լրացումներով ու փոփոխություններով:</p>	
48 բ	<p>Յեթե բանվորը պայմանաժամին չի ստա- ցել պայմանով վորոշած վաճառքությունը (վարձողի պահանջով այդ պետք է հաստատ- վի Գնահատիչ-կոնֆ. հանձնաժողովի կող- մից):</p>	Տրվում ե յեր- կու շաբաթվա- դատումի չա- փով (հոդ. 89):
48 գ	Յեթե վարձողը խախտել ե. պայմանագրի նույնը:	
48 դ	<p>Յեթե վարձողը և վարչության ներկայա- ցուցիչը կամ նրանց ընտանիքի անդամ ները կոպիտ են վարվում բանվորների հետ (Գեշ հաստատմամբ):</p>	Նույնը:
48 ե	<p>Յեթե աշխատանքի առողջապահելան պայմանները գեպի վատն և փոխվել (որի- նակ՝ բանվորը փոխադրված և խեղղուկ, կեղտու շենք):</p>	Նույնը:
48 հ	<p>Մյուս ընլոր գեպքերում, վորոնք հատուկ նախատեսնված են որենքով:</p>	Նույնը:

ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԻ ԿԱՇԵԱՌՆԵՐԸ : Ամեն մի ձեռնարկություն կարող է հաջող աշխատել, յեթև նուինչպես հարկն է, կազմակերպված լինի, յեթև նրա մեջ բացի մասցած բոլորից նաև ներքին կարդ հաստատված լինի:

Ամեն մի բանիուր պետք է ճիշտ իմանա, թե ի՞րը է աշխատանքի գալու, յերբ է լինելու ճաշի ընդհանումը, ուր պետք է պահի գործիքները, վոր վարպետից և ինչ դեպքերում պետք է անհրաժեշտ ցուցմունքներ ստանա, աշխատանքի ժամանակ ինչուվ է թույլատրվում դրազվել և այլն: Մինչհեղափոխական ժամանակ ներքին կարգի հաստատուն կանոններ հաճախ չելին լինում: Նշանավոր չափով ամեն ինչ կախված էր վարպետից կամ բաժանմունքի վարչից: Իր հերթին այդ լիակատար քմահաճույքի դուռ եր բաց անում բանվորներին առւղանքի յենթարկելու, մեծ մասամբ առանց վորեն հիմունքի: Ներքին կարգի կանոնները բանվորին խիստ դիսցիպլինի մամուլի տակ սեղմելով, նրան սպառնում ելին, որինակ, խոչոր գրամական պատճով համբարություն բերած թերթի համար:

Համաձայն Աշխատանքի Որենսգրքի, այդ բոլորը փոխված են: Այսպես, 43 հոդվածը մատնանշում է, վոր «Վարձողի կամ ձեռնարկության վարչության իշխանությամբ վարձվողին վորուն դրամական պատճի յենթարկելն արգելվում է, բացառությամբ այն դեպքերի. վորոնք նախատեսված են ներքին կարգի հասուկ պրեմիներով ու կանոններով»: Ահա այսուղ վոչ մի քմահաճույք չի կարող լինել, վորովհետև (Համաձայն 54 հոդ.): «առանձին պետական, հասարակական և մասնավոր հիմնարկությունների և ձեռնարկությունների համար ներքին կարգի կանոնները մշակվում են ձեռնարկության վարչության և համապատասխան արհմիությունների տեղական բաժինների միջև կայացած համայնալությամբ և հաստատվում են աշխատանքի տեսչի կողմից. վերջինիս վորոշումները կարող են գանգատարկվել տեղական Աշխատանքի Բաժնում, վորի վճիռը վերջնական է»: Այդ կանոնները (§ 51) պետք է իրենց մեջ պարունակեն պարզ, ճշգրիտ և ըստ հնարավորին սպառիչ ցուցմունքներ աշխատավորների և վարչության ընդհանուր ու հատուկ պարտավորությունների և այդ կանոնները խախտելու համար պատասխանատվության կանչվելու սահմանի և կարգի մասին»: Այդ կանոնները մտցնում են հնգից վոչ պակաս բանվոր ունեցող բոլոր ձեռնարկությունները, պետք և հայտնի լինեն բոլոր

բանվորներին և ի հարկե (§ 52) շարժոք և հակասեն «աշխատանքին վերաբերող որենքներին ու վորոշումներին», ինչպես և ավյալ ձեռնարկության կամ հիմնարկության հավաքական պայմանագրին» : Այսպիսով ներքին կարգի կանոնները խորհրդային վործարանում մի կողմից աջակցում են բանվորի աշխատանքի պաշտպանությանը, իսկ մյուս կողմից, բարձրացնում են աշխատանքի արտադրողականությունը :

**ՅԵՐԱՇԽԻՔՆԵՐ ԱԻ ՓՈԽ-
ՀԱՏԱԿԻՑՈՒՄՆԵՐ :** Պապիկյանը աշխատանքի մասելու հենց առաջին սմսում յերկու անդամ՝ ստիպված եր մասնակցել բանվորների ժողովներին, վոր տեղի էլին ունենում աշխատանքի ժամանակ, մասնաւոր արագածավոր ելին ընտրում Քաղաքային Խորհրդի համար, իսկ մյուս անդամ՝ կենարոնական բանվորական կոոպերատիվի լիազորներ :

Այս յերկու ժողովը Պապիկյանից և նրա ընկերակիցներից 6 ժամ խլեցին: Յերկորպ ժողովում Պապիկյանն ընտրվեց կենարան, կոոպերատիվի լիազոր, իսկ մեկ ամիս հետո ել՝ ժողովրդական ատենակալ: Նա յերբեմն ստիպված եր աշխատանքի ժամանակ նիստի ժնակ ժողովրդական դատարան կամ լիազորների ժողովը համախել: Զար հին ժամանակ այդ բոլոր նիստերի ու ժողովների համար նրա զատումից փառակորապես կհանելին: Իսկ այժմ նրա շահերը պաշտպանում են Աշխատանքի Որենսդրքի 77—78 հոգվածները*):

Մի անդամ ընդհանուր ժողովում Պապիկյանը հանդիպեց իր ընկեր Կարապետյանին, վոր շտապում եր ինչ-վոր տեղ:

*.) Այդ հոգվածներն ասում են.

77. Բանվորներն ու գյուղացիները իրենց ընտրական իրավունքի իրագործման ժամանակ մէջին դատում ստանում են այն դեպքերում, յերբ աշխատանքի ժամանակ այդ իրավունքի իրագործումը հավանություն ե գտել համապատասխան պետական որդանի կողմից:

78. Այն բանվորները և ծառայողները, վորոնք դատարան են կանչվում իրրե վկա, եքսպերտ կամ առենակալ, դատական իշխանությունների կողմից նրանց վրա զրած պարտականությունների կատարման ժամանակ ստանում են միջին դատումը

— Պապիկյան, ու՞ր ես գնում, ինչու՞ յես այլպես շտապում:

—Ե՛, բարի: Միթե՞ չը գիտես, լենինական եմ տեղափոխվում: Մի ամիս առաջ ինձ գործով ուզարկել եյին մեր տրեստի 2-րդ գործարանը, վոր դապդահների համար պահեստի մասեր պատվիրեմ, իսկ այնուհետ-ինժիները իմ հին ծանոթիր դուրս յեկավ: «Ուզում ես, —ասում ե, —մեղ մոտ տեղափոխենք քեզ: Աշխատանքը հետաքրքիր ե, քեզ լավ կը տեղափորենք»: Ե՞ս, յես ել համաձայնվեցի: Մեր տնօրինը (դիրեկտոր) և գործարանային կոմիտեն ել չեն առարկում:

— Բայց չե՞ վոր տեղափոխվելու համար շատ փող ե պետք: Իսկ չե՞ վոր դու 4 հոգուց ընտանիք ոյնին: Ինչպես պիտի դուրս դաս այդ նեղ գրաւթյունից:

— Վոչինչ: Աշխատանքի Որենսգիրքը կողնի: 81 և 82 հոդվածը գիտե՞ս*): Ա՛յ, հաշվեմ, տե՛ս: Գործուղված եմ յեզել 12 որ ե. պիտի ստանամ ճանապարհածախս (այսինքն տոմսակի փող) և որապահիկ-որական ամսական միջին դատումիս $\frac{1}{24}$ -ր, այսինքն ամսական ոսճիկիս կեսը: Յես ոսճիկ եմ ստանում 8-րդ կարգով, իսկ համաձայն մեր պայմանագրի «փոխադրումների և գործուղումների ժամանակ 9-րդ կարգից ցած սակադրված ծառայողներին ու բանվորներին որապահիկ արգում և համաձայն միջին դատումի, բայց համենայն դեպս վոչ ցած ցած 9-րդ կարգի աշխատողների տարիի Փայտիցին կոպարից»: Իսկ մեղ մոտ, ինչպես դիտես, 9-րդ կարգը միջին հաշվով 48 ո. և վաստակում:

*.) Այդ հոգվածները ասում են.

81. Ծառայության գործով գործուղված բանվորներին և ծառայողներին գործուղման վողջ ժամանակ յերաշխավորվում ե պաշտանի և միջին դատումի պահպանումը և որտպահիկ է վճարվում որական վոչ ցած, քան տօմսական դատումի $\frac{1}{24}$, բայց այդ փոխատուցվում են գործուղման հետ կազմած ծախքերն Աշխադողկոմատի սահմանած կարգով ու չափերով:

82. Հիմնարկության կամ ձեռնարկության վարչության կարգադրությամբ բանվորին և ծառայողին մի տեղից մյուսը տեղափոխելու ժամանակի, յերբ որդ կապված և բնակավայրը փոխելու հետ (հոդ. 37), հասուցվում են նրա տեղափոխման ծախքերը և որապիկ և արմատում տեղափոխման ժամանակամիջոցի ու լրացուցիչ կերպով և որվա համար վոչ ցած, քան

— Ե՞ն, այլտեղ ի՞նչ լավ բան կա : Մի՞թե գործուղման ժամանակ դու ծախքեր չես ունեցել :

— Հսկ' ք, Կարապետյան, մի՞ ընդհանիք : Տևանում ես այստեղ յիս ամե բան զրել եմ : Տեղափոխման ժամանակ համաձայն որենքի որապահիկ և տրվում ամսական դատումի^{1/21} չափով, այսինքն յերկու որվա ճանապարհի համար 2-ական սուրբի և լրացուցիչ կերպով 6 որվա համար, ընդամենը 16 ո . : Ապա միանվագ նպաստ ամսական դատումի ձափով—ուրեմն ելի 48 ո . : Ընտանիքի ամեն մի անդամին ամսական դատումի^{1/4} վոչ պակաս, այսինքն չորս հոգուն ելի 48 ո . : Վերջապես, համաձայն մեր հավաքական պայմանագրի «Կարապետյան տեղափոխությունների ժամանակ վճարվում են նույնուն աշխատողի հետ տեղափոխովով նրա ընտանիքի անդամների ճանապարհածախըրը» : Ընդհանուր առմամբ մոտ 120 ո . դուրս կը գա : Թերես բավական ե :

Դե՛, մնաս բարով — ասաց նա, յերբ Կարապետյանը ամուր սեղմեց նրա ձեռքք :

Յերկու շաբաթ անցավ : «Պարիզի Կոմմուայի» անվան գործարանում հատուկ հագուստ ելին տալիս : Կարապետյանը մուզ գույնի կտորից խալաթ ստացավ :

Այս՝ — մտածում եր Կարապետյանը — վաս բան չե Աշխատանքի Որենակիրքը : Այս՝ ընկերու պատմում եր, վոր կապիտալիստների ժամանակ յերբեք չկա այս աչքը բողոքում, թէ՛ մարմինդ, տնտեսատերին ի՞նչ : Բանվորն ուժից ընկավ, նրա փոխարեն հարյուրափոր առողջ գործադուրկներ սպասում են գարպասներից դուրս : Հատուկ հագուստի մասին խոսք ել չկար այն ժամանակ : Իսկ մեզ մոտ ահա հատուկ հագուստը տրվում ե որենիքի համաձայն : Բայց չեմ հիշում, թե վոր հոգվածի համաձայն :

որական ամսական դատումի^{1/21} որ, բացի այդ նրան միանվագ նպաստ և տրվում նրա նախկին ծառայության տեղի ամսական ոռնիկի չափով, իսկ նրա հետ իր ընտանիքի անդամների տեղափոխման գեպքում լրացուցիչ միանվագ նպաստ և տրվում վոչ պակաս քան ամսական դատումի^{1/4} ը ընտանիքի ամեն մի անգամի համար :

Ագնենք Պատղիկյանին .—Համաձայն 86 հոդվածի^{*)} :

Մի ամիս ել անցավ : Բանվորների ընդհանուր ժողովում դործարանային կոմիտեյի նախագահը մի նորություն հայտնեց—զործարանը մի ամսով կանդ և առնում վերանորոգության համար :

— Իսկ մենք ի՞նչ պիտի անենք, —վրովվեցին բանվորները :

— Դուք անհանդստանալու պետք չունեք : Զե՞ վոր այժմ ցարական ժամանակները չեն : Համաձան «Աշխատանքի Որենսդրքի» 87 հոդվածի «այն բանվորները և ծառայողները, վորոնք մնում են մինչև մեկ ամիս ժամկետով իրենց աշխատանքը դադարեցրած ձեռնարկություններում ու հիմնարկություններում, սահանում են իրենց դատումը իրենց տարիֆային կոպարի չափով»: Զե՞ վոր ինքներդ հիշում եք, յերբ վերջերս մեր գործարանը Յ որ կանգնեց, դուք հենց այս նույն հոդվածի ծանոթության հիման վրա վու միայն տարիֆային կոպարը, այլ յերեքորյա միջին դատումը ըստացաք: Իսկ յեթե գործարանը յերկար ժամանակով և կանգ առել (վոչ թե Յ որով, այլ մի ամիս ժամանակով), այն ժամանակ միջին դատումով վճարելիս ձեռնարկությունը չի դիմանա, դրա համար ել վճարվում ե միայն հիմնական տարիֆային կոպարը, առանց սովորական ավել աշխատանքի:

— Ավելի լավ կը լիներ արձակուրդների ըրջանում վերանորուել: Այն ժամանակ թե գործարանի վարչության և թե մեզ վրա այնքան թանկ չեն նստի, —լսեցին տեղերից մի քանի ձայն:

— Ընկերներ, այդ մասին ել ենք մտածել: Բայց հետաձգել չի կարելի, պետք ե այժմ վերանորողել:

^{*)} Բերում ենք հոդվածի բնագիրը:

86. Այն ձեռնարկություններում, ուր արտադրության պայմանները զուգորդված են հաղուստի և վոտնամանի արագ մաշվելու հետ, վարձողը պարագագու և իր ձեռնարկության մեջ դրազված աշխատողներին հաղուստ և վոտնաման մատակարարել համաձայն արհեստանոցի ցուցակի և այն նորմաների, վոր հատուկ կը հաստատվի Աշխատողների լիազորի կողմից: Այն դեպքերում, յերբ տեղական որդանների յեղբակացության համաձայն հնարավոր չի համարվի այդ, այն ժամանակ վարձողը պետք ե դրանց փոխարեն դրամ վճարի՝ դրանց փաստական արժեքի չափով:

Կարապետյանը ժողովից դուրս գալով գործարանի բակում կանգնեց այն յերեք հյուսնի մոտ, վորոնք գործարանի հաշարանի համար սեղաններ ելին չինում:

— Բնկերներ, ի՞նչպես եք աշխատում դուք, մեր գործարանի, թե՞ ձեր սեփական գործիքներով:

— Մեր սեփական գործիքներով: Մենք սկզբում կարծում ենք, վոր հաշիվներս սխալ եր, ավելի շատ գործիք կը փշացնենք, քան ինքներս կը վաստակենք: Բայց այդպիս չեղավ, յերբ համաձայնության ենք, դարձն, ներկա յեր գործարանային կոմիտեյի անդամը, վոր ասաց, թե Աշխատանքի Որենսգրքում գրված է, վոր մեզ մեր գործիքների համար լրացուցիչ կերպով պիտի վարձատրեն^{*)}: Այդպիս ել յեղավ: Եշանակում և այժմ այն կարգերը չեն, ինչ վոր ցարական ժամանակներում եր: Այն ժամանակ տրնտեսատերը վոչինչ հասկանալ չեր ուղում — գործիքը փշացրել ես, ինքը ել գնիր: Տնտեսատերը հարստանում եր բանվորի արյանքրտինքով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆ : Աշխատանքի Որենսգրքը միայն թօնին: այս փոքրիկ դեպքում չե (գործիքի ամորտիզացիայի վճարում), վոր պաշտպանում և բանվորի դատումը: Երա պաշտպանությանն ենվիրված «Աշխատանքի վարձատրության» հատուկ մեծ գլուխը: Երա մի նշանավոր մասը մենք իր տեղին շարադրեցինք հավաքական պայմանագրի վերլուծման ժամանակ:

Հավաքական պայմանագիրը սահմանում և աշխատավարձի հաստատում նորմա, վորից պակաս բանվորը չի կարող ստանալ ձեռնարկության մեջ: Սակայն կան մեծ քանակությամբ մենակրանվորներ, վորոնց չեն ընդուրելում վոչ տարիի Փայտին համաձայնու-

^{*)} Այդ նախատեսնեմած և «Որենսգրքի» 85 հոդվածում:

85. Վարձվողին պատկանալ գործիքի ոգտագործումը ձեռնարկության կարիքների համար պարտավորություն և դնում վարձողի վրա գործիքի մաշվելու համար բանվորին համապատասխան գումարում փոխհաստցել. այդ վորոշում և համարկան պայմանագրայի կամ դրա շինելու պետքում, համաձայն Աշխատանքում լիազորի վորոշման:

թյունները, վոչ ել հավաքական պայմանագրերը։ Սորհրդային պետությունը պարտավոր է պաշտպանել այդ բանվորների շահերն ևս, միջոցներ ձեռք առնել և թույլ չտալ, վոր նրանց աշխատանքը չափից դուրս ցած վարձատրիլի։ Յերբեմն մի տնտեսական որդան ժանր պայմաններում դանվելով, նույնպես պատրաստվում է հավաքական պայմանագրով աշխատավարձի չափազանց ցած կոպար սահմանել, նշանակում և, այսուղ ել պետք է բանվորի շահերը պաշտպանել։ Այդ պատճառով Որենսգրքի 59 հոդվածի հիման վրա Աշխատողկոմատը պարբերաբար սահմանում է այսպես կոչված աշխատավարձի մինիմում (նվազագույն չափ), այսինքն մատնանշվում է այն գումարը, վորից պակաս ԽՍՀՄ ամբողջ տերրիտորիայի վրա վոչ վոք վոչ վոքի աշխատանքը վարձատրելու իրավունք :

Արեմուտքում բոլոր յերկրների բանվորները անհաջող կուվում են բանվորի կյանքը և առողջությունը պաշտպանող այդպիսի մինիմումի հաստատման համար։ Միայն 1922 թ. բուռն գործադրությանց հետո Անզլիայում ածխահատների համար մինիմում մտցվեց, վորից ցած չեր կարող ինչել նրանց աշխատավարձը։ Հետագայում իրավես այդ մինիմումը վերացվեց։ Իսկ Խորհրդային Միության մեջ աշխատավարձի այդպիսի մինիմում սահմանված է վոչ միայն որենքով, այլև մեր ժողովրդական տընտեսության ընդհանուր վերելքի հետ ու հավաքական պայմանագրերով աշխատավարձի համապատասխան անձան հետ այդ մինիմումի կոպարները անշեղորեն մհծանում են։

Մեր Աշխատանքի Որենսգրքը վճռականապես կուվում է այն «արյուկ-սիտեմի» վեմ (այսինքն բանվորների վարձատրումը վոչ թե վրամով, այլ ապրանքներով), վոր այնքան հաճախ կիրառվում է Արեմուտքում։ Նա արգելում է բանվորների վարձատրումը տղանքներով, վորովհետև յերեմն բանվորը վատ վորակի ապրանք ստանալով կամ վոչ այն, ինչ վոր նրան պետք է, չատ և վնասվում։ Իսկ տընտեսությունը մի ավելորդ անդամ շահվում են բանվորի հաշվին, տունարական վաստակ ստանալով։ Որենսգրքի 67 հոդվածի համաձայն «վարձատրությունը տրվում է փողով և միայն այնքան, ինչքան այդ վերապահված է աշխատանքային կամ հավաքական պայմանագրերում՝ բնարդյունելով (նատուրայով) (ապրելու բրնձական հատկացնելով, պարենով, անձնական սպառման ա-

ուարկաներով) : Իսկ ի՞նչ անել այն դեպքում, յերբ վարձողն ուղղակի սնանկանա ու միջացներ չունենա իր բոլոր պարտքերի, գրանց թվում նաև բանվորների աշխատավարձի վճարման համար : Աշխատանքի Որենսպիրքը այդ մասին ել է հոգացել : ՅՅ-րդ հոդվածում մատնանշվում է, զոր վարձողի սնանկության դեպքում հավաքական և աշխատանքային պայմանագրերից բղոսք բանվորների ու ծառայողների բոլոր վճարումները պետք է տեղի ունենան առաջին հերթին, նախապատվություն ստանալով վարձողի բոլոր մնացած պարտքերի հանդեպ», այսինքն այն վարկասուները, վորոնց սնանեսպական որդեանը վամ մասնավոր ձեռնարկուն պարտք են նյութերի, ապրանքների համար և այլն, կտպասեն, իսկ առձեռն միջոցներից վարձողը նախ և առաջ պարտավոր է հատուցել բանվորներին և ծառայողներին :

Պապիկյանը հիշում է, վոր 1916-17 թ. թ. բավորները շարաթ որերը ստիպված եյին 5-6 ժամ կանգնել գրասենյակի առաջ ու ոռնջի սպասել : Իսկ այժմ, շարաթ որը դեռ աշխատանքը վերջացնելուց յերկու ժամ առաջ արտելը կիները փողը տանում են բոլոր համքարությունները : Աշխատանքի Որենսպիրքը դրա վերաբերմամբ իրաւունք է : 87 հոդվածի համաձայն «Վարձատրությունը տրվում է աշխատավի ժամանակ և աշխատանքի կատարման տեղում» : Մակայն այստեղ պետք է նշել, վոր բարոր անտեսական որդուական այգակես ձտառակահությամբ չեն կատարում Աշխատանքի Որենսպիրքի այդ կետը : Մեր արհմիությունները ստիպված են դեռ շատ ձեռարկություններում կոիվ մղել այն բանի գիշ, զոր աշխատավարձը ժամանակին շուալու, աշխատանքից հետո տալու չորհիվ բանվորները ժամանակ են կորցնում :

Պապիկյանի հետ միասին աշխատավարձ ստացավ՝ նրա հետ կողք կողքի աշխատական չափանիշար բանվորը, 16-ամյա կոմյերիտական Մկրտիչը :

— Այս ի՞նչ բան է, Միկիչ ախակեր, — կատակով ասաց նրան Պապիկյանը, զու 6 ժամ ես աշխատում, իսկ սոնիկ ստանում ես 4-րդ կարգով, ինչպես հասակավոր բանվորն ութ ժամի համար : Այսպես ե դուքս զալիս, զոր քո վրա 2 ժամի վտղն իդուր և ծախսվում :

Միկիչը վիրավորվեց :

— Այս ի՞նչ է, ծանոթ չես զու Աշխատանքի Որենսպիրքն : Մի վախենա, արհեստական կտպակերպիչը մեղ ամեն ինչ բա-

շատրել եւ այսուղ 61-րդ հոդվածում ասված ե՞ «կրծառ բանվորան կան որվա համար անչափահասների աշխատանքը վարձատրվում է այնպես, ինչպես լրիդ բանվորական որվա համապատասխան կոտորորիայինը», իսկ 75-րդ հոդվածում ասված ե՞ «այն անչափահասները, վորոնց թույլատրված եւ գործարքային աշխատանքը, այդ աշխատանքների կատարման ժամանակ վարձատրվում են հասակավորների հետ միատեսակ գործարքային ղնահատումներով, լրացուցիչ վարձատրություն ստանալով 2 ժամի համար համաձայն իրենց տարիֆային կոպարի»: Զե՞ վոր այժմ ցարական ժամանակները չեն: Անչափահասին ուժից վեր աշխատանքով խեղղելու փոխարհն ավելի լավ և նրան 2 ժամ ֆարբիկա-ուրծարանային դպրոց ուղարկել: Ծիծաղում եք, մեկ ֆարբործով մուտքայի և քանվանում, իսկ ի՞նչ կարող եք անել առանց մեկ մի 10—15 տարուց հետո, ո՞վ եւ ձեզ փոխարինելու:

— Դե՞ լավ, Միկիչ: Միթե չե՞ս տեսնում, վոր յես կատակ տրեցի, — հանդուսացնում եր Պատիկյանը բարեցած կոմյերիուականին:

— Այս այլպես, — հաղթանակորեն պատասխանեց Միկիչը, — չիշիք Աշխատանքի Որենսգիրքը:

ԱՇԽԱՑԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԻ: Պետքույանն ու Ամհակյանը մի Տ-ԺԱՄԱԿԱ ԲԱՄՎՈՐԱԿԱՆ բնակարանում եյին ապրում ե յերեկոները, յերբ ազատ ժամնակ եյին ունենում, յերկար զրոյց եյին ուում: Իդեալ ասած, Սահակյանը սովորական մարդ չեր, ի՞նչ ասես, չեր տեսել, լուրջ, վստահելի մեկն եր: Մինչև հեղափոխություն հանուն բանվորական գործի բանու ել եր նոտել: «Պարիզի Կոմմունայի» անվան գործարանում նրան առաջ քաշեցին գործարանային կոմիտեյի համար, իսկ յերբ սկսվեց լենինյան կոչը, Սահակյանն առաջնորդից մեկն եր, վոր կուսակցության մեջ մտավ:

Յերեկոները հաճախ խոսք եր լինում Աշխատանքի Որենսգրքի մասին:

— Զե՞ վոր մեծ բան չե, — ասում եր մի անդամ Սահակյանը, — Որենսգրքի 94-րդ հոդվածում մի յերկու տասնյակ բառ կա. «Եորմալ աշխատանիքի ժամանակի տևողությունը ինչպես արտադրությունների, այնպես ել արտադրության համար անհրաժեշտ ուժանուական աշխատանքների մեջ չի կարող ավելի լինել. ժամ 8 ժամ»:

Նշանակում և աշխատանքի յես զնում ժամը 8-ին, վերջացնում եռ այն և կեսին կամ 5-ին (ներառյալ ճաշի կես ժամ կամ մեկ ժամվաք ընդունիչումը) և թվում և, հասարակ բա՛ն և : Բայց Ծուսասատանի բանվարդ գասակարգը զբա համար ինչքա՞ն արյուն և թափել և ինչքա՞ն տանջանքների յե դիմացել և գեռ իշքա՞ն պիտք և կովին ոմբողջ աշխարհի բանվորները հենց այդ 8-ժամյա բանվորական սրվա համար : Մայիսի 1-ին, միջազգային պրոլետարական տոնի որն Արեմուտքի բավորների (առաջները նաև Ծուսասատանի բանվորերի) գլխավոր պահանջներից մեկը «Երեք ությանկն» և, այսինքն՝ ութ ժամ աշխատանք, ութ ժամ հանդիսա, ութ ժամ քուն :

— Մինչև 1914 թ. միայն հեռավոր Ավստրալիայում բանվորները ձեռք ելին բերել 8-ժամյա բանվորական որ, բայց այն ել ու բենքով չեր հաստատված : Յարական Ծուսասատանում բանվորներն աշխատում երին 11 ու կես ժամ, յերբեմն ել ավելի շատ : Պատերազմի վերջանալուց հետո, ծանր արդյունարերական կրթիսի (ճգնաժամի) շրացանում բոլոր յերկրների կապիտալիստները, վոր վախեցած ելին վրդովված բանվորական մասսաների գրոհից, վորոնց աշքերը բացվել եր խմբերիսամբարական խարեյությունից ու թժրությունից, ստիլիզած ելին զիջումներ անել : 1918 թ. նոյեմբերի 23-ի և գեկտեմբերի 17-ի որենքով 8-ժամյա բանվորական որ ժողվեց Գերմանիայում, 1919 թ. ապրիլի 23-ին — Ֆրանություն, ապա Անգլիայի արդյունարերության մի շարք ճյուղերում և այլն : Մեզ մոտ Ծուսասատանում զեռ կերենսկու համաձայնողական կառավարության ժամանակի շատ տեղերում բանվորները ինքնազլուխ, «Հայտարարման կարգով» 8-ժամյա բանվորական որ հաստատեցին, վորովհետեւ աշխատանքի մինիստրները, մինչհիկներ Գվողդեր և Սկորելեմը, ինչպես և Կերենսկու ամբողջ կոռավարությունը բուրժուազիայի հետ միաբան ելին և չելին ցանկանում որինականացնել 8-ժամյա բանվորական որը :

— Բայց բուրժուական յերկրներում արդյունարերական կրթիսության սկսեց թուլանալ : սոցիալ-համաձայնողականներին, կազմիտալի հավատարիմ սպասավորներին հաջողվեց կանզնեցնել բանվորների հեղափոխական շարժման աճող ալիքը և 1921 թվից կապիտալիստներն սկսում են իրենց հերթին համերաշխորեն հարձակվել բանվոր գասակարգի վրա : Համաշխարհին պատերազմից հետո, 1919 թ. աշնանը, բոլոր յերկրների բուրժուական կառավարությունները վաշինգտոնում կոնֆերենցիա գումարեցին քննու-

թյան տոելու այն հարցերը, թե ինչպես կանխեն ապագա պատերազմները, ինչպես զինաթափվեն, ինչպես իրը թե լավացնեն բանվարների գրությունը և այլն: Ի հարկե այդ բոլորի մասին յերկար, մեղրածոր, վոչ մի պարագարություն չգնող խոսակցություններ տեղի ունեցան, իսկ իրոք ամեն մի պետություն, ամեն մի իմաստի հայության գիշատիչ աներկդիմի հասկացնում եր հարեանին, վոր ինքը մտագիր և վոչ թե զինաթափվել, այլ սպառագինվել: Իրենց յերկրների բանվոր գասակարգին հիմարացնելու նպատակով բուրժուական կառավարությունները վաշինսկունի կոնֆերենցիայում վճիռ ընդունեցին 8-ժամյա բանվորական որ մտցնելու մասին: Սակայն այդ նշանավոր վորոշումներն այլպես ել թղթի վրա մնացին: Ամերիկան չի կատարում այն: Անգլիան ել չի կատարում այն, հայտարարելով թե՝ վաշինսկունի կոնֆերենցիայի վորոշումները «չեն համապատասխանում ավանդություններին» (այսինքն բանվոր գասակարգին խեղդելու անդիմական բուրժուազիայի սովորություններին): 1921 թ. մայիսի 17-ի որենքով Ֆրանսիայում 8-ժամյա բանվորական որը վերացված և փոխադրություն բանվորների և ելքարո-տեխնիքական ձեռնարկությունների համար: 1922 թ. սեպտեմբերին վերացվեց այն յերկաթուղայինների և ծովագնացների համար: Բայց ամենից վատր Գերմանիայում յեղալ: Յեթե 1922 թ. վերջին այնտեղ դեռ զոյտություն ուներ 48-ժամյա բանվորական շաբաթ, ընդվորում բանվորների ու ծառայողների մի մասն ել ավելի քիչ եր աշխատում, որական 7 ժամ (հանքավորները, ծխախոտագործների մի ժամը), ապա Գերմանիայի բանվոր գասակարգի պարտությունից հետո, 1923 թ. աշնանը, ութժամյա բանվորական որը պայթեցվեց: Գերմանական բուրժուազիային հաջողվեց, դեղին արձմիությունների գավաճան չինովնիկների անմիջական պաշտպանությամբ, իր բանվորների համար 9-10 ու նույնիսկ 12-ժամյա բանվորական որ մտցնել (միջին հաշվով 60-ժամյա բանվորական շաբաթ): Յեզ միայն ԽՍՀՄ մեջ, պրոլետարական դիկտատորայի յերկրում, 8-ժամյա բանվորական որը (46-ժամյա բանվորական շաբաթը), բանվոր գասակարգի հիմնական նվազումներից մեկը, անձեռնամխելի մնաց: Այդ նվազմանը հսկում ե վոչ միայն Աշխատանքի Որենսգիրքը, այլև Կարմիր բանակը, վոր մեր սահմաններում պաշտպանում և աշխատանքի իշխանությունը:

— Խորհրդային իշխանությունը ե'լ ավելի հեռուն և գնում։ Արենսդրքի 95-րդ հոդվածի համաձայն 16 մինչև 18 տարեկան անշափահասների բանվորական որվա տեսողությունը չի կարող 6 ժամից ավելի լինել, իսկ 14 մինչև 16 տարեկան անշափահասներինը՝ 4 ժամից։ Այս, վորովհետեւ մասվոր աշխատանքը պահանջում է ավելի մեծ նյարդային լարում և ավելի չափ և ուժապառում որդանիզմը, քան Փիդիքականը, ուստի այդ կատեգորիայի համար 6-ժամյա բանվորական որ և ասհմանված (բացի այն ծառայողներից, վորոնց աշխատանքը ունմիջականորեն կապված և արտադրության հետ—գործարանային գրասենյակները)։ Եռոյնակես և 6 ժամ և այն անձերի բանվորական որը, վորոնք սառը յերկրյա աշխատանք են կատարում։ Ընդհանրապես կրծասմինչեւ 6-7 ժամ—բանվորական որ և մացգած մի ամբողջ շարք ծանր և առողջության համար վնասակար արտադրության ճյուղերի մեջ։

— Գիշերային աշխատանքը հոգնեցուցիչ և և բանվորի որդանիզմի վրա քայլայիչ ազգեցություն և ունենում։ Այդ պատճառով Արենսդրքի համաձայն (97) «գիշերային աշխատանքի ժամանակ աշխատանքի ժամանակի տեսողությունը մեկ ժամով կրծատվում է»։ Այդ նշանակում և, վոր ճախտարակագործը (տօքար) պիտք և դիշերն աշխատի վոչ թե 8, այլ 7 ժամ, հանքահան բանվորը վոչ թե վեց, այլ 5 ժամ*։

— Մի քանի կատեգորիայի բանվորներ կան, ինչպես՝ տնային ծառայողները, ումոնիս անողները, գթության քույրերը և տյի՛ն, վորոնց համար անկարելի յև բանվորական որվա ճիշտ յերկարություն սահմանել մեկ որվա ընթացքում։ Այդ պատճառով Արենսդրքի 97-րդ հոդվածի համաձայն այդպիսի բանվորները կարող են որը աշխատել 10-12 ժամ ու ավելի, բայց այնպես, վոր նրանց աշխատած ժամերի թիվը ամսվա մեջ չանցնի 192 ժամից, այսինքն 8-ժամյա բանվորական որվա ամսական նորմայից։ Յերկար ժամեր շարունակվող անընդհատ աշխատանքը խիստ ուժասպառում և բանվորին, վնասում և նրա առողջությանը և ցածացնում և աշխատանքի արտադրուղականությունը։ Այդ պատճառով վոչ ուշ քան աշխատանքն սկսելուց 4 ժամ անց, պիտք և սահմանվի աշխատանքի

*.) Իդեալ, Աշխատանքի Արենսդրքի 96-րդ հոդվածի ծանոթությունը մատնանշում և, վոր «գիշերային և համարվում յերկոյան ժամի 10-ից առ ժամի 6-ը ընկած ժամանակը»։

ընդմիջում վոչ պակաս, քան կես ժամ տևողությամբ և վոչ ավելի, քան 2 ժամ (Հոդ. 100) անունդ ընդունելու համար։ Այդ ընդմիջումն ի հարկե աշխատանքի ժամանակի մեջ չե մտնում։

ԱՐՑԱՋԱՄԱՆՅԱ. ԱՇԽԱՏԱՆՔԻ : — Այժմ անցնենք արտաժամյա աշխատանքներին։ Բանվորի համար դու հենց այն ամենավնասակար բանն է, վոր գանդաղորեն, բայց հաստատ քայլքայում և նրա առողջությունը, հարկադրելով ուժից վեր լարված կերպով աշխատել մի ավելորդ սուրբ ստանալու համար։ Արեմուտքում, բուրդուական յերկրներում 8-ժամյա բանվորական որը հաճախ հենց այդպես ել վերացվում է։ — Թղթի վրա բանվորական որը ուժժամյա յե մնում, բայց ձեռնարկուներին թույլ և տրվում դրանից դուրս ուզած չափով արտաժամյա աշխատանք մտցնել, վարձատրության չնչին բարձրացումով (մոտավորապես 10 %)։ Այդպիսով 8-ժամյա բանվորական որից վոչինչ չի մնում։ Իսկ խորհրդային որենսդրությունը այստեղ ել ամուր հսկում և բանվորի շահերը։ Որենսդրքի 103 հոդվածի համաձայն չի բույլարվում աշխատանքի ժամանակից դուրս աշխատանք (արտաժամյա աշխատանք)։

— Զի թույլատրվում։ — ընդհատեց Պապիկյանը։ Իսկ ինչու ապա մեր գործարանում ամեն որ արտաժամյա աշխատանքի ցուցակ և կազմվում։

— Հենց վասն ել այլ ե, վոր կազմվում է։ Ասենք, թե հեղեղումն ե տեղի ունեցել, պետք ե ամրացնել գետի ափերը, հեղեղված թաղերից և տներից ջուրը պետք ե հեռացնել, բնակիչներին փրկել։ Հարկ չկա այստեղ արտաժամյա աշխատանքի մասին վիճել, պարզ բան ե, վոր նու հարկավոր ե։ Կամ մի ուրիշ գեղք վերցնենք։ — քաղաքի ջրմուղի դիմավոր խողովակը արաքել ե, պետք ե շինել, թե չե ամբողջ քաղաքն առանց ջուր կը մնա։ Կամ թեկուզ մեր գործարանի ձուլարանում վորեն բան են ձուլում և ժամի 4-ին չեն վերջացրել։ Հո՛ չեն թողնի կիսատ, չեն դժացնի իզուր տեղը աշխատանքը և նյութը, ստիպված պետք ե աշխատեն 2-3 ժամ ել։ Կամ առնենք հարեան ելեքտրո-կայանը, դինամոն կարգի չե (կոտրված ե մի մասը, փոկն ե կոտրված), նույնպես չի կարելի թողնել ու հեռանալ, մինչեւ վոր կարգի կը բերի մամեն ինչ։ Այդ բոլոր գեղքերը մանրամասն վերապահված են Որենսդրքի 104 հոդվածում, վոր արտաժամյա աշխատանք թույլ և տալիս, «ո» այսպիսի աշխատանք-

հեր կատարելու ժամանակ, վոր անհրաժեշտ են հանրապետության պաշտպանության և հասարակական ազետներն ու վտանգները կանխիկու համար. բ) ջրի ժամակարարության, լուսավորության, կանալիքացիայի, փոխադրության և պոստ-հեռագրատան ու հեռախոսային կապի հասարակական-անհրաժեշտ աշխատանքները կատարելու ժամանակ, վորպեսզի վերացվեն այն պատահական կամ անսպասելի հանգամանքները, վորոնք խանգարում են նրանց կանոնական գործելուն. զ) սկսած աշխատանքը վերջացնելու անհրաժեշտության ժամանակ, վոր արտադրության տեխնիքական պայմանների չնորհիվ չնախատեսնված կամ պատահական յեղանակով ուշացել և և վերջացել նորմալ աշխատանքի ժամանակ, յեթե սկսած աշխատանքի ընդհատումը կարող է նյութեղների և մեքենաների փչացման պատճառ դառնալ. դ) ուժունելի և մեխանիզմների կամ չինությունների վերականգնման ժամանակավոր աշխատանքներ կատարելու ժամանակ այն դեպքում, յերբ դրանց խանգարումը առաջ ե բերում աշխատանքի ընդհատում նշանավոր քանակով աշխատավորների համար»:

— 104—106 հոդվածներում ասված և նաև, վոր վարչությունը իրավունք չունի ինքնազլուխ կերպով արտաժայա աշխատանքները քույլարել: Արտաժայա աշխատանքները պետք և հաստատվեն զնահատու-կոնֆլիկտային հանձնաժողովի կամ արհմիտության կողմից աշխատանքի տեսչի թույլտվությամբ, այն ել մի բան-վորի համար տարեկան վոչ ավելի քան 120 ժամ և վոչ ավելի, քան 4 ժամ միմյանց հաջորդող յերկու որվա մեջ: Իսկ 18 տարեկանից ցած անշափահասներին բոլորովին չի թույլատրվում արտաժայա աշխատանք կատարել: Իսկ վորպեսզի աշխատանքի տեսուչը կամ արհմիտությունը ի վիճակի լինեն հետեւու, արդյոք պահում և ձեռնարկուն այս բոլոր կանոնները, Որենսդրքի 108 հոդվածը պահանջնջում և, վորպեսզի ամեն մի արտաժայա աշխատանք «վարձ-վորի հաշվեղբույյում», ինչպես և արտաժայա աշխատանքների հատուկ դրայվություն նշվի, ժամանանշելով աշխատանքի ժամանակի սկիզբն ու վերջը և այն վարձատրությունը, վոր վարձվողն ստանում և արտաժայա աշխատանքի կատարման համար»: Բնդ վորում համաձայն Որենսդրքի (հոդ. 80) արտաժայա աշխատանքի առաջին յերկու ժամբ վարձատրվում են մեկ ու կես, իսկ հետագա ժամերը կրկնակի չափով: Իսկ ինչ վերաբերվում ե գործարքով աշխատողներին, ապա հառկանալի յէ, վոր նրանք արտաժայա

աշխատանքի ժամանակ ամեն մի արտաժամյա ժամի համար լրացուցիչ կերպով ստանում են առաջին յերկու ժամին կես ժամվար և լրիվ—չետեւյալ ժամերին :

— Սակայն ամեն ինչ այնպես ճիշտ չի կատարվում, ինչողևս այդ գրված է Աշխատանքի Որենսգրքում : Որենսգրքի խախուռմանը մի խմստ նշանավոր ժամն ընկնում և չթույլատրված արտաժամյա աշխատանքներին : Մեղքներս ինչ թաղցնենք, այս կամ այն պետական հիմնարկության կամ ձևոնարկության զեկավարը համախ միության թիկունքում թույլատրում և արտաժամյա աշխատանք : Իբր թե աշխատանքը շտապ և, այլապես ամբողջ գործը կեանդնի, իսկ նոր լրացուցիչ բանվորներու ու ծառայողներ վարձելու համար կամ, տառել և, միջոցներ չկան կամ իբր թե նորերը գործից զլուխ չեն հանի : Յեվ ի՞նչ և ստացվում : Այնաեղ, ուր կարող ելին յերկու բանվոր կամ ծառայող աշխատել, մեկն և աշխատում, ծանրաբեռնված համարյա որական և ժամ արտաժամյա աշխատանքով : Իսկ այդ ավելիորդ և ժամը բանվորական պետության վրա բավական թանկ են նստում, վարավետեն վարձատրվում են վոչ թե իբրեւ և, այլ իբրեւ 11 ժամ : Աշխատանքի բաժինը և արհմիությունները անխնա կովելով արտաժամյա աշխատանքների դեմ, յերկու նպատակի յեն համուռմ՝ կրճատում են վերապիր ծախքերը և քաշցնում են գործազրկությունը, ծառայությունը տալով ելի մի քանի հապար գործազրկների :

— Բայց գործը հատկապես սուր բնույթ և ստանում, յերբ Որենսգրքի արտաժամյա աշխատանքներին վերաբերող վորոշումները խախուռմ են փոքր տնտեսատերերը, ժամնավոր ձեռնարկության տերերը : Նրանք ըստ հին սովորության, վոչ մի կերպ չեն կարողանում հրաժարվել բանվորների ամենաանխիղճ շահազործութից : Նրանք եւ «8-ժամյա բանվորական որվա» կողմնակիցներ են, բայց «առավոտիվա ժամի 8-ից մինչև յերեկոյան ժամի 8-ը», կամ թե շատ ավելի : Յեվ ի հարկե նրանց մոտ խօսք եւ չկա արտաժամյա աշխատանքի ժամերի համար մեկ ու կես կամ կրկնակի շափով վարձատրելու մասին : Հատկապես վաս և անշափահանների վիճակը, վորոնք ամենից ավելի ընկճված ու յերկշու են : 12—14 աարեկան յերեխաններին հարկադրում են աշխատել մինչև ուշ գիշեր : Բայց չե՛ վոր մասնավոր տնտեսատերը բացի ձեռնարկության աշխատանքից, ձգտում և անշափահանն, հատկապես աշեկերտին ոգտագործել նաև «տնտեսության» մեջ իբրեւ տհային զանւղան

աշխատանքներ կատարող։ Ահա Հենց այստեղ եւ հարկավոր միության և աշխատանքի տեսչության հատուկ ուշադրությունը, հատուկ սրատեսությունը։ Անհրաժեշտ է, ժողովրդական Դատարանի աշխատանքային նստաշրջաններին այդ առարկիզում ավելի շատ աշխատանք տալ։

ՀԱՆԳՍՏԻ ԺԱՄԱՆԱԿԻ : — Աշխատանքի մասին խոսեցինք, խոսեցինք նաև հանգստի մասին, — ասաց Ժպտալով Աահակյանը։ Հանգիստն անհրաժեշտ բան է, հաճախ առանց այն վոչ մի աշխատանք առաջ չի գնա։ Յեզ Աշխատանքի Որենսգիրքը նրան բավական ուշադրություն է նվիրում։

— Մեր զործարանում, որինակ, շարաթ որն աշխատանքը վերջանում է ժամը յերկուսին և մենք նորից զործարան ենք գալիս յերկուշարքի ժամը 8-ին։ Եշանակում է, համաձայն Աշխատանքի Որենսգրքի, աշխատավորը պետք է շարաթական 42 ժամ անընդհատ հանգիստ ունենա։ Բնդ վորում «շարաթական հանգստի որերը սահմանվում են տեղական Աշխատանքի բաժինների կողմից արհեստակցական միությունների խորհուրդների հետ համաձայնության դարձ և կարող են նշանակվել ինչպես կերակի որերը, այնպես ել շարաթվա վորեե ալ որը, նայած ավայալ վայրի բանվորների և ծառայողների այզգային-կրօնական կազմին» (Աշխ. Որենսգրքի Հոդ. 109)։ Յեզ ընդհանրապես շարաթական հանգստի որերի ու տոն որերի նախորյակին, համաձայն Որենսգրքի 113 հոդվածի՝ բանվորական որվա յերկարությունը 6 ժամից շպիտի անցնի»*): Ասպա՛ Որենսգրքի նույն հոգվածը մատնանշում է, վոր «ամսական

*) Բակ ինչ վերաբերում է այդ որերի վարձատրության խնդրին, առաջ այդտեղ պետք է զեկավարվել Աշխատանքի հետեւյալ պարզամարանությամբ (1925 թ. փետր. 12-ին). «Ժամանակականարձի, որավարձի կամ ժամավարձի ժամանակ, նույնուես և զործավարձի ժամանակ, յեթե հաշվի հիմք ե ընդունված որավարձի համար ամսական դարիֆային կոսպարի^{1/2-ը}, իսկ ժամավարձի համար ^{1/192} այն ժամանակ վոչ բանվորական որվա և արանյալ ժամերի համար հատուկ վարձատրություն չէ արվում»։

Բնդ սմին, իհարկե, չի բացարկվում, վոր վարձատրություն սահմանվի հավաքական պայմանագրով։

վարձատրություն ստացող անձերի աշխատավարձից տոն և տանի
նախորյակ որերի համար ոռօճիկից չպետք է հանելք : Մեր հավա-
քական պայմանագիրն ել (Հոդ. 32) հիշատակում է, զոր «որով և
զործարքով աշխատավ բանվորներին և ծառայողներին իրենց որա-
կան տարիքային կոպարի չափով լրացուցիչ վարձատրություն է
տրվում, ինչպես արդեն հաստատված, այնպես առաջիկայում
Խորհրդային իշխանության կողմից հաստատվելիք հեղափոխական
տոների համար» :

— Իսկ վորո՞նք են այդ տոները : Հունվարի 1-ը—նոր տարի .
Հունվարի 22-ը (այսինքն 1905 թ. Հունվարի 9-ի որը) — Եփուլայ
2-րդի ժամկարմների կողմից բանվորների գնդակահարության որը .
մարտի 12-ը — ինքնակալության տապալման որը, մարտի
18-ը — Պարիզի կոմմունայի հայտարարութը, մայիսի 1-ը —
ինտերնացիոնալի որը . նոյեմբերի 7-ը — պրոլետարական հեղափո-
խության որը, բուրժուազիայի իշխանության տապալութը Ռու-
սաստանում : Բացի այս, տեղական աշխատանքի բաժինները նա-
հանգական արհմխորհուրդների համաձայնությամբ իրավունք ու-
նեն, բացի այս տոն որերից, «հասուլ հանգստի որեր» սահմանե-
լու, տարեկան վոչ ավելի, քան 8 որ, հարմարեցնելով այդ որերը
տեղական պայմաններին, բնակչության կազմին, ժողովրդական
տոներին և այլն :

— Այժմ, առնենք որինակի համար, ջրմուղի կայարանի բան-
վորներին : Նրանց աշխատանքն անընդհատ է, վորովհետեւ բնակ-
չությանն առանց ջրի թողնել չի կարելի նույնիսկ կիրակի որերը :
Այդ պատճառով այն բանվորները, վոր ստիպված են հանգստի
որերին աշխատել, զրա փոխարեն աղատ են լինում իրենց համար
հարժար այլ որերին : Յեթե վորեկ դործարանում կամ ձեռնարկու-
թյան մեջ վորեկ շոտառ աշխատանք կամ չնախատեսնված կոտըր-
վածք, ուեմոնտ հարկադրեն աշխատանքը շարունակել հանգստի
որը կամ տոն որը, աղատ այդ որերի աշխատանքը կրինակի չափով և
վարձատրություն :

— Բայց այդ բոլորը քիչ և .—ամբողջ տարվա ընթացքում
անընհատ և ծանր աշխատանքը ամեն բանվորի և ծառայողի համար
ավելի յերկարաժետ հանգստի սուր պահանջ և ստեղծվում : Բացէ
այդ, անհրաժեշտ է, վոր հիվանդ կամ հյուծված բանվորները
բժշկվեն : Մինչ հեղափոխական ըրջանում, ի հարկե, այս բոլորի
մասին մտածելն իսկ ավելորդ եր : Ու միայն Խորհրդային իշխա-

Հության ժամանակ Աշխատանքի Որենսպերքը վարձողին պարագաներից է 5½ ամսից վոչ պակաս աշխատած բանվորին և ծառայողին արձակուրդ տալ (տարին մեկ անգամ) :

— Քանի՞ որ, — հարցրեց Պապիկյանը :

— Վոչ պակաս քան 2 շաբաթ : Հիշում եմ, վոր սոսաջ մի ամիս ելին արձակուրդ տալիս, բայց այդպիսի արձակուրդը մեր արդյունաբերության համար շափաղանց վնասակար զուրս յեկայի : Այնուամենայնիվ մինչև 18 տարեկան անչափահասները մեկ ամիս են արձակուրդ ստանում և բացի այդ, մնասակար և վտանգավոր արտադրությունների մեջ աշխատաղներին ելի՛ 2 շաբաթ լրացուցիչ արձակուրդ են տալիս : Ցեվ ահա, ամեն գարուն, մոտավորապես ապրիլ — մայիս ամիսներից գործարանային կոմիտեներում և գնահատությունների հանձնաժողովներում սկսվում և աշխատանքը, այն ե՛ կազմում են արձակուրդ ստացողների ցուցակները, վորոշում են նրանց հերթը և այլն : Այս գործը հեշտ չե : Իհարկե, հանգատանալ պետք ե՛, բայց համաձայն Որենսպերքի «արձակուրդներից սպավելը չպետք ե՝ խանդարի ձեռնարկությունների, հիմնարկությունների կամ տնտեսությունների աշխատանքի նորմալ ընթացքը» : Հաճախ 2 շաբաթով կամ մեկ ամսով կանոնեցնում են ձեռնարկությունը, անհրաժեշտ ուժունաբեր կատարում, իսկ այդ ժամանակ բանվորներին արձակուրդ և արքունիք :

— Իսկ յեթե վոչ վոք չկա, վոր ինձ փոխարինի, յեթե շտագ ու տեսական աշխատանք կա, ինչպես պետք ե՝ լուծել արձակուրդի ինդիքը :

— Ահա այդ առթիվ Որենսպերքն ասում ե՝ վոր Գևորգ թույլ-տըլությամբ արձակուրդը կարելի յե դրամական փոխատուցմանը փոխարինել : Սակայն արհմիություններն արդ բանի դեմ կովում են : Բանվորներից վամանք գիտակցարար չեն ցանկանում արձակուրդ ստանալ՝ փոխատուցում ստանալու համար միայն : Իսկ իրոք ի՞նչ և ստացվում : Զե՞ վոր չի կարելի առողջությունը փողով դնել : Հիմնարկան չողուածության արձակուրդի համար գեռ կարելի յե փոխատուցում ստանալ կամ այդ արձակուրդը հետապատճեռությունը պատասխանակար է, մեկը 1923 թ. 2 շաբաթվա արձակուրդ ուներ և նույնքան ել 1924 թ. : 1923 թ. նա արձակուրդ չի ստացել, փոխատուցում էլ չեն վճարել նրան : Ուրեմն նա կարող ե 1924 թ. մեկ ամսով արձակուրդ ստանալ : Բայց վնասակար պրոֆեսիաների բանվորների ու անչափահասների լրացուցիչ արձակուրդները վոչ

վի դեպքում չի կարելի դրամով փոխարինել : Արենսգիրքը հրա-
հանգում է , ինչ ել վոր կուզե լինի , այդ արձակուրդները նաևու-
րայսվ տալ (Հոդ . 116) :

— Բայց ահա մեր համբարության մեջ աշխատադ վասկանակա-
ղործը (ըլեսար) բնդամենը յերեք ամիս և յեկել և արգեն արձա-
կուրդ և ստանում : Ինչի՞ հիման վրա :

— Շատ պարզ : Այդ աղային յեն ճանաչում եմ : Ես մեզ մոտ և
տեղակոխիցի ելեքտրական կայարանից : Իսկ ելեքտրական կայա-
րանում նա անընդհատ պշխատում եր 2½ ամիս : Իսկ համբամյա-
կանքի Արենսգրքի (Հոդ . 114) «առանց աշխատանքն ընդ-
հատելու , յերբ աշխատավորը պետական մեկ հիմնարկությունից
կամ ձեռնարկությունից մյուսն և անցում» , նա արձակուրդ ստա-
նում նույնպիսի իրավունք ունի , ինչպիսի իրավունք վոր ունի
նույնքան ժամանակ , (5½ ամիս) մեկ ձեռնարկության մեջ աշ-
խատելիս :

— Վերջապես , հիմանդության կամ մայրության պատճառով
աված արձակուրդներն ամենեվին աշխատավորներին չեն զրկում
հերթական և լրացուցիչ հանդսուի արձակուրդն ողտաչործելու
իրավունքից :

ԿԱՆԱՅՑ ՅԵՎ ԱՆՉԱՓԱ-
ՀԱՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԵՐԸ : — Բնկեր Պապիկյան , մենք արդին
համար ԱՇԽԱՏԱԿԵՐԸ : խսիւ ենք մեր հավաքական պայմա-
գրի մասին , — շարունակում եր ընկ .
Սահակյանը , — նրա մեջ մի հասուլ բաժին կա-«աշկերտություն» :
Գործարանային հավաքական պայմանագրերում նա վերաբերում է
Փարբեկա-գործարանային դպրոցների աշակերտաներին և այլն :
Մինչդեռ աշկերտության հարցը պետք է ավելի լայն դնել : Ես
հատկապես կարենոր և մասնավոր ձեռնարկությունների մեջ զրադ-
ված անշաբահասների համար , վորոնց մարակը ձեռքին տնտեսա-
տերը անխիզմ կերպով տանջում է : Աշխատանքի Արենսգրքը ան-
շաբահասներին պաշտպանում և տնտեսատերի ծաղրից ու շա-
հագործումից : Յեթե վորքիկն աշկերտ և մտել , ապա պետք է սո-
վորեցնել նրան և վոչ թե քչել նրան գարեջրատուն , խանութ , վոր
հատակները լվանու կամ տանը որորոց որորի և այլն : Վարձողը
պարտավոր է , ինչպես հարկն և , սովորեցնել անշաբահասին :
Ռւաման վորոշ ժամկետից հետո (վոչ բարձր , քան չորս տարի
ամենարարձր վորակման աշխատանքի համար) աշակերտը իրավունք

ունի քննություն բռնել։ Յեթե նա քննություն բռնեց, այն ժամանակ նրան պետք է վճարել վոչ թե աշակերտական կոռարով, այլ համապատասխան վորակման բանվորի կարգով։ Իսկ յեթե արնեաստերը կը համատի կամ հին ժամանակների պես տանջիլ կոկսի անշափահասին, այն ժամանակ արհմիության և աշխատանքի տեսչի, իսկ նրանից հետո նաև ժողովրդական դատարանի ձանապարհը հեռու չեւ:

— Ամեն անշափահաս չի կարող աշխատանքի մանել։ Աշխատանքի Որենսգիրքն աշալուրջ պաշտպանում և փոքրահասուկների առողջությունը։ Համաձայն 135 հոդվածի, բացարձակապես արգելվում ե 16 տարեկանից փոքր անձերին աշխատանքի ընդունել։ 14 մինչև 16 տարեկան փոքրահասակները կարող են աշխատանքի ընդունվել աշխատանքի տեսչության թույլտվությամբ սուր նյութական կարիքի դեպքում կամ Փարբեկա-գործարանային աշկերտության դպրոց մանելու համար։ Ինչպես գիտես, 16 մինչև 18 տարեկան անշափահասները և ժամ են աշխատում։ Մինչև 18 տարեկան բոլոր փոքրահասակներին և անշափահասներին բոլորովին արգելված են գիշերային, արտաժամյա և ստորերկրյա աշխատանքները։ Նրանք հասակավորների համեմատությամբ կրկնակի արձակուրդով են ոգտվում և այդ արձակուրդները չի կարելի զրամով փոխարինել։

— Յեթե Աշխատանքի Որենսգիրքը այդպես խնամքով պաշտպանում է յերեխաների և անշափահասների առողջությունը, աճող սերնդի առողջությունը, ապա հասկանալի յեւ, վոր նա եւ ամելի հոգածար պետք է լինի գեպի կին—բանվորուհին, գեպի կին—մայրը։ Յեվ իրոք, մեր որենքները հատուկ ուշագրաւթյուն են դարձնում կնոջ աշխատանքի պաշտպանության վրա ինչպես այն պատճառով, վոր ամեն մի բանվորուհի կարող է ապագայում մայր լինել, այնպես եւ այն պատճառով, վոր կնոջ որդանիզմը նշանավոր շափով թույլ ե, քան աղամարդունը։ Զի թույլատրվում, վոր կանայք աշխատեն մի շարք հատկապես ծանր ու վնասակար գործերում, արգելվում ե նաև նրանց գիշերային և ստորցերկրյա աշխատանքը (հոդ. 129)։ Իսկ այն գենքում, յերբ անկարելի յեւ գերացնել կանանց համար գիշերային աշխատանքը (որինակ՝ հիվանդապահուհիների, տելեֆոնիստկաների), այն ժամանակ բացարձակութեան արգելվում է նման աշխատանիներ հանձնել հղի և ծիծ տվող

կանաց (Հոդ. 131)։ Արգելվում և նաև նրանց արտաժամյա աշխատանքը։

—Մինչհեղափոխական ժամանակ կին-բանվորուհու համար հզությունը ծանր աղետ էր։ Նա ստիպված էր աշխատանքի ժամանակ իր վերջին ուժերը լարել, թե չեն նրան անհապաղ գործարանի դարպասներն ելին ցույց տալիս։ Այդ տեսակետից խորհրդային որենսդրությունը կին-բանվորուհուն բուրժուական յերկրներում չլսված արտօնություններ և տալիս։ Ֆիզիկական աշխատանքով զբաղվող բանվորուհիները աշխատանքից ազատվում են (Հոդ. 132) «8 շաբաթ մինչև ծնունդը և 8 շաբաթ ծննդից հետո, իսկ գրասենյակային և մտավոր աշխատանքով զբաղվողները—8 շաբաթ մինչև ծնունդը և 6 շաբաթ ծննդից հետո»։ Կին-բանվորուհին աշխատանքից ազատվելու ժամանակ պահում և իր լրիվ դառնումը (այսինքն տարիի Փային կոպարը իր սովորական ավել աշխատանքով կամ արտաժամյա աշխատանքի վարձատրությամբ)։ Այն բանվորուհիները, վորոնք զբաղված են մտավոր աշխատանքի մի քանի ամենածանր տեսակներով (մանկաբարձուհիներ, մեքենապրուհիներ, տելիքոնիստակիներ) հզության և ծննդի ժամանակ աշխատանքից նույն ժամկետով են ազատվում, ինչ վոր Փիզիքուկան աշխատանքի բանվորուհիները։ Բացի ընդհանուր ընդմիջումներից, ամեն մի ծիծ տվող մայր աշխատանքից ազատվում և վոչ սակավ, քան $3\frac{1}{2}$ ժամը մեկ և վոչ պակաս, քան կես ժամով, վոր կերակրի իր յերեխային (Հոդ. 134)։ Այդ բանում մոր հսմար դյուրություն ստեղծելու նպատակով խոչոր ձեռնարկություններում կազմակերպում են այսպես կոչված «մսուրներ»։ Այդ ընդմիջումները աշխատանքի ժամանակի հաշվի մեջ են մտնում։ Որենազրի 138 հոդվածի համաձայն «հզության 5-րդ ամսից կանանց չի կարելի գործուղման ուղարկել իրենց մշտական աշխատանքի տեղից դուրս, յեթե դրա համար չեն ստացված նրանց համաձայնությունը»։ Իսկ համաձայն մեր հավաքական պայմանագրի (§ 37), մինչև 18 տարեկան անչափահասները, ծիծ տվող և մանկահասակ յերեխաներ ունեցող կանայք չեն կարող ընդհանրապես վորեւ տեղ գործուղմել իրենց մշտական բնակության տեղից դուրս, յեթե դրա համար չի ստացված նրանց համաձայնությունը»։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ — Յեթե այդ բոլորին ավելացնենք Աշխատանքի Որենըսպագի կողմէն հատուել հագուստի և արտադրական հագուստի, հատուել սննդի, ձեռնարկությունների առողջապահական դրության մասին և այլն, վերջապես, սոցիալական ապահովագրությունը, վորի մասին ամենից լավ կը լինի առանձին ու մահրաման խոսենք, այն ժամանակ կստացվի խոչորագույն քանակությամբ կանոններ ու վորոշումներ, վորոնք պաշտպանում են բանվորի դատումը, առողջությունը և կյանքը: Բայց բավական չե հայքի վատագի այդ բոլոր վորոշումները, պետք և հետեւ նրանց իսկական ու լրիվ կենապործմանը:

Ցարական Ռուսաստանում ել տեսքի համար գոյություն ունեցին աշխատանքի պաշտպանության ինչ-վոր պոչատ որենքներ: Բայց նրանց կենապործման վրա հսկում եր կառավարության համակած գործարանային տեսուչը, ցարական չինովնիկը, վոր փոք մի կապ չուներ բանվոր դասակարգի հետ: Գործարանային տեսուչը պարտավոր եր աշխատել վոստիկանության սերտ աշխատակցությամբ: Իսկ գործարանային տեսուչների աշխատանքը զեկավարում եյին այսպէս կոչված ֆարբիկա-գործարանային առյանները: Նրանց կազմի մեջ նույնիսկ խոսք ել չկար բանվորական կազմերապությունների ներկայացուցչի մասին, բայց զրա փոխարեն մտնում եյին փոխահանդապետը, դատախազը, ժանդարմական վարչության պետը, Փարբիկանտների ու գործարանատերերի ներկայացուցչիները և այլն: Հասկանալի յե, վոր այդպիսի գործարանային տեսչությունը միանդամայն բուժությունագիտի սրաով եր, բայց բանվոր դասակարգի համար նա միայն խեղդիչ ողակ եր: Ընդհանրապես, հենց ճիշտ այլպես և կառուցված գործարանային տեսչությունը ամեն մի բուժությունական յերկում: Իւ ժամանակին հեռու չգնաց նաև կերենսկու համաձայնողական կուսափառություրը, վոր բուրժուազիայի դուդուկով եր պարում:

Իր թե «սոցիալիստական» աշխատանքի տեսչության անվան տակ, նա անձեռնմխելի թողեց հին չինովնիկական գործարանային տեսչությունը:

— Ի հարկե, չոկանմբերյան հեղափոխությունը քարը քարի վրա չթողեց: Բանվորական պետության մեջ, ուր աշխատանքի բուժությունները բանվոր դասակարգի իշխանությունն և հաստատում, այդ նույն բանվոր դասակարգը ներկայացուցիչներ և ընտ-

րում նրանց կատարման վրա հսկելու : Որենսգրքի 146—147 հազ-
վածների համաձայն այդ հսկողությունը աշխատանքի տեսուչնե-
րին և հանձնաբարվում, «վորոնց վորոշ ժամկետով ընտրում են
արհեստակցական միությունների խորհուրդները և հաստատում և
Աշխաղողկամատը» : Այդ ընտրությունները սովորաբար կատարվում
են գործարկումների համաֆաղաքային կամ ռայոնական պլենու-
մում : Իր կոչմանն անհամապատասխան տեսուչը միշտ կարող է
պաշտոնից հեռացվել : Ամեն մի տեսուչ յենթարկվում և աշխա-
տանքի օրաշաղանության տեղական բաժնին (մեզ մոտ—Աշխա-
տանքի նահանգական բաժնին կից) և աշխատում և սերտ կապ
պահելով արհմիությունների հետ :

— Տեսչի աշխատանքը բավական դժվար է : Սովորաբար ըր-
ջանը չափազանց մեծ և լինում, աշխատողները քիչ են, մինչդեռ
աշխատանքի տեսուչը պարտավոր է հաճախել «ցերեկվա ու զի-
շերվա ամեն պահին իր շրջանի բոլոր ձևնարկությունները և
հիմնարկություններն ու տնտեսությունները և այն բոլոր տեղերը,
ուր աշխատանք է կատարվում, նույնպես և նրանց կից բանվորների
համար զոյություն ունեցող հիմնարկությունները (բնակարաննե-
րը, հիմնադրանցները, մուտքները և այլն»*) : Պետք է ամեն ինչ
անձամբ և ժամանակին դիմել, հարկ յեզած դեպքում վարձողնե-
րից պահանջել անհրաժեշտ բացարություններ, ինչպես և բոլոր
անհրաժեշտ գրքեր, փաստաթղթեր և տեղեկություններ ներկա-
յացնելը**) : Ասենք, անհրաժեշտ է նոր զործարան կամ արհեստանոց
բաց անել, գրա համար գիմում են աշխատանքի տեսչին, իսկ նա
խնամքով քննություն կատարելուց հետո վճռում է, թե արդյոք
նոր ձևնարկությունը բավարարում և աշխատանքի պաշտպանու-
թյան բոլոր որեքներին և «կարծիք է հայտնում ամբողջ ձևակա-
լությունների կամ նրանց մասերի բացման թույլատրելի լինելու
մասին»***) : Յեթե վորեւ տեղ տեսուչը վարձողին բոնի շիտոյա-
տըրված արտաժամյա աշխատանքներ կատարել տալու, հատուկ
հագուստ և հատուկ սնունդ չտալու, անչափահասներին կամ կա-
նանց աշխատանքը շահագործելու, մեքենաների մոտ ցանկապա-
տերի բացակայության, ձևնարկության առողջապահական վաս-
դրության ժամանակ, ապա նա անմիջապես «հրահանգներ և տա-

*) Որենսգրքի 148 ա . հոդվածը :

**) Որենսգրքի 148 բ . հոդվածը :

***) Որենսգրքի հոդ . 148 գ :

լիս, վոր պարտավորեցուցիչ են պետական, հասարակական և մասնավոր հիմնարկությունների, ձեռնարկությունների, տընտեսությունների և անձերի համար, պերացնելու իր նկատած խախտումները և այլ պակասություններն աշխատանքի պաշտպանության ասպարիցում»^{*}): Իսկ հաճախ, վարձողին վարչական և դատական կարգով պատասխանատվության և կանչում ներկա Որենսգրքի այն վորոշումները, Խորհրդային իշխանության գեկրեանները, Հրահանդինները կարգադրությունները և այլ ակտերը խախտելու համար, վորոնք նպաստակ ունեն պաշտպանելու աշխատավորների կյանքը և առողջությունը»^{**}): Այս վերաբերում և հատկապես մասնավոր տնտեսատերերին: Փողովրդական դատարանի հատուկ աշխատանքային նստաշրջանները արագ վճռում են աշխատանքի տեսաւչների հարուցած բոլոր վորձերը և կապը կրարած շատ մասնավոր տնտեսատերեր խելքի կը գտնի, մի կլոր զումար տաւգանք տալով կամ այլ պատիժ կրելով:

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՝ Լո՛վ, բայց աշխատանքի տեսեկ ԱՇԽԱՏԱՎԻ ՊԱՇՏ- սուչը մենակ ինչպես հետեւի բոլոր ՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ: ԱՇԽԱՏ- խախտումներին: Զե՞ վոր մեկ աշխատանքի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ տանքի տեսչին ընկնում են մի քանի շԱՆՉՆԱԺՈՂՈՎՐԾ: տասնյակ ավելի կամ պակաս խոչը պետական ձեռնարկություններ, իսկ

հարյուրավոր և խարգախ մասնավոր տնտեսատերեր:

— Ահա հենց այսուղ և նրան սպնության են համառւմ մեր արհմիությունները: Այն միությունների մեջ, վորոնց միջնորդները թույլ են տալիս, աշխատանքի պաշտպանության հատուկ բաժիններ կան: Պետական ձեռնարկությունների մեջ աշխատանքի պաշտպանության ամբողջ հիմնական աշխատանքը զործարկումներն են կատարում: Խոչը ձեռնարկությունների մեջ աշխատանքի պաշտպանության հատուկ հանձնաժողովներ են ստեղծվում: Հենց այդ հանձնաժողովներն են հետեւում են, վոր կատարվեն Աշխատանքի Որենսգրքի բոլոր վորոշումները, նույնպես և հավաքական պայմանագրի աշխատանքի պաշտպանությանը վերաբերող կետերը: Երանք կովալմ են արտաժամ յա աշխատանքների գեմ, պաշտպանում են անչափահանների կրծատ բանվորական որը, կանանց աշխատանքը, հոգում են, վոր ճիշտ կատարվեն հիմնողության,

*) Որենսգրքի հոդ. 148 դ:

**) Որենսղրքի հոդ. 148 է:

հղության, ծննդի գեպքերի արձակությների կանոնները, նույնալեռ և հերթական ու լրացուցիչ արձակությներինը: Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովները հետևում են, վոր պահպեն հավաքական պայմանագրի ամենից հաճախ խախովող կետերը, այն եւ՝ բանվորներին հատուկ հագուստ և հատուկ սնունդ տալը, նույնպես և նախազգուշական միջոցներ (ակնոցներ, գիմակներ, բեսպիրատորներ—որդաշնչության մեքենաներ) տալը: Նրանք կորիւ են մզում այն պայմանների գեմ, վորոնք ծնում են արհեստակցական վնասակարություն և գորախտ պատահարեր, վարչությանը դրում են վեհափեյացիա մտցնել, մեքենաների շուրջը ցանկապատեր շինել, բանվորներին ել պարզաբանում են ընկերական կարգապահության անհրաժեշտությունը աշխատանքի պաշտպանության որդանների պարտադիր վորոշումների կատարման դործում, մասնավորապես հոգում են, վոր բանվորները չխախտեն վանդակուր մեքենաների հետ վարվելու կանոնները և այլն: Հանձնաժողովները միջոցներ են ձեռք առնում լավացնելու ձեռնարկությունների ընդհանուր առողջապահական դրությունը և աշխատանքի պայմանները (դուչ, բաղնիք, ճաշարան և այլն), նույնական հոգում են, վոր Փարբեկա-զործարանայն բակերը, արհեստանոցները, հանդերձարանները, լվացարանները, արտաքնոցները և այլն կանոնավոր և մաքուր վիճակում լինեն: Աշխատանքի պաշտպանության հանձնաժողովն աշխացում և աշխատանքի տեսչությանը ձեռնարկությունների և հիմնարկությունների ամեն տեսակ հետազոտության ժամանակ և ինքն ել ակտիվ մասնակցում և այդ հետազոտություններին: Նա յե նույնպես, վոր հոգում և բանվորների հանրակացարանների և տուն-համայնքների բարեկալովման մասին: Վերջապես աշխատանքի պաշտպանության հանձնաժողովն սկսում է, վոր կուլտ-հանձնաժողովը ծանոթացնի բոլոր բանվորներին աշխատանքի պաշտպանության հիմունքների, նույնպես և Աշխատանքի Որենսդրքի հետ դասախոսություններ, անկյուններ կազմակերպելու, համապատասխան դրականություն տարածելու միջոցով: Բացի այդ բոլորից, աշխատանքի պաշտպանության հանձնաժողովները մեծ աշխատանք են, կատարում նաև սոցիալական ապահովագրության առարիգում: Բայց այդ մասին մենք հետո յենք խոսելու^{*}):

*.) Տես «Ի՞նչ և սոցիալական ապահովագրությունը» ԳՐԵՒՔՆԵՐ:

— Իսկ էնչ պետք ե անել, յիթե վարչությունը չի համաձայնվում կատարել զործարանային կոմիտեյի որինական պահանջներն աշխատանքի պաշտպանության զործում։

— Այս ժամանակ զործարանային կոմիտեն հրավիրում ե աշխատանքի տեսչին, վորը հարկադրական կարգով, տուղանքի և նման պատիճների սպառնալիքով ստիպում ե վարչությանը նկատած զանցառություններն առզել։

— Փոքրիկ ձեսնարկության մեջ, վորակը բանվորներն ավելի քիչ են և աշխատանքի պաշտպանության զարծը մյուս միութենական պարագանությունների հետ միասին կատարում և պատզամավորը կամ արհելիազորը, շատ անդամ աշխատանքը վաս և զրբված։ — յերբեմն զործարանի աշխատանքի պաշտպանության հանձնաժողովն ամփաներով հանդիսաւ քնում ե ու տեսնում (դժբախտաբար միայն յերազում), վոր գործարանում աշխատանքի պաշտպանության ասպարիզում ամեն ինչ հիմնալի վիճակում և։ Յերբեմն ել պատզամավորներից մեկը՝ մասնավոր ձևոնարկության մեջ արիությունը կողընելով, կարող ե թաքցնել անտեսանակերերին, յերբ նա աշխատանքի պաշտպանության կանոնները խախտել։ Այդ բարոր գեղքերում թե զործարանային կոմիտեն, թե միությունը և թե իրենք բանվորները վուս միայն պետք ե պատասխանավորթյան կանչն Աշխատանքի Որենսգիրքը և համարական պայմանագիրը խախտող բոլոր անձերին, այլև աշխատանքի պաշտպանության հանձնաժողովների բոլոր «քնած թագավորականներին», երենց պարտականությունները մուտքած բոլոր արհապատկամավորների և լիազորների ականջները մի լավ քաշն։ Այլապես աշխատանքի լավագույն տեսուչը հաճախ անզոր կը լինի ձևոնարկությունների վրա հսկել առանց զգայուն, բազմակողմանի ճյուղավորման շուշափուկների, առանց ուշագիր աչքերի ու ականջների՝ հանձնին աշխատանքի պաշտպանության լավ զործարանային հանձնաժողովների և մասնավոր ձևոնարկությունների բանվորների պատզամավորների։

ԱՐՀՄԵՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱԿԱՌԵՐՆԵՐԸ ՀԱՄԱ-
ԶԱՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՈՐԵՆՄԳԲՔԻ :

— Արհեստակցական միություն-
ներն իրենց ամբողջ աշխատանքով
ոգնում են Աշխատանքի Որենսգիրքի
ուանքի Որենսգիրքը մեծ իրավանք-
ներ և տալիս արհմիություններին։ Այսպես, որինակ, համաձայն

Արենսպրքի § 15 միայն արհմիությունը (և վոչ թէ քանովորների առանձին խմբակը, ինչպես յերբեմն լինում է Արեմուտքում) իրավունք ունի հավաքական պարմանագիր կնքելու։ Յեթե բուրժուական յերկրներում կառավարությունն ընդհանրապես ամեն կերպ արգելք և հանդիսանում արհմիությունների աշխատանքին, նրանց վաստիկանական հսկողության տակ և առնում, իր հայեցողությամբ թույլատրում և կամ արգելում նրանց գործուներությունը, ապա Խորհրդային Միության մեջ, առում և Աշխատանքի Արենսպիրքը, արհեստակցական (արտադրական) միությունները «պետական հիմնարկություններում, ընկերությունների և միությունների համար սահմանված վոչ մի ցուցակագրման յենթակա չեն և ցուցակագրվում են նրանց միացնող միջմիություններան կազմակերպություններում Արհմիությունների Համառոտական Համագործարի սահմանած կարգով»։

Սակայն, բացի այն, վոր ԽՍՀՄ մեջ արհմիությունները կուրող են բոլորովին ազատ և առանց վորեն ճնշման աշխատել, ողեատությունը պարտավորեցնում և գեղ ամեն տեսակ պաշտպանություն ցույց տալ նրանց։ Այսպես, Արենսպրքի § 155 առում և, «Բոլոր պետական սրբանները, համաձայն ԽՍՀՄ և Սահմանադրության § 16, պետք և արհեստակցական (արտադրական) միություններին և նրանց միացումներին ամեն տեսակ աջակցություն ցույց տան, տրամադրելով նրանց սարքավորված չենքեր աշխատանքի սպարաններ, միությունների տներ կաղմելու համար, արտոնություններ տան պօստով, հեռագրով, հեռախոսով, հաղորդակցության յերկաթուղային և ջրային ձնահապարհներով ողափելու համար և այլն»։ Բանօրական պետության համար սա, ի հարկի, լիովին հասկանալի բան և, բայց չլաված՝ ամեն մի բուրժուական յերկը համար։

Բայց այդ եւ քիչ և —Աշխատանքի Արենսպրքի համաձայն արհմիությունների գերը միացն այն չե, վոր Ներկայացնում են ու պաշտպանում բանօրների և ծառայողների շահերը վարչություն ու պետական սրբանների առաջ։ Երանց խնդիրներն ավելի լայն են։ Արենքը ձևուարկությունների ֆարբիկա-պործարանային կոմիտեներին իրավունք և տալիս «աջակցելու պետական ձեռնարկությունների մեջ արտադրության նորմալ ընթացքին և մասնակցելու համապատասխան արհեստակցական (արտադրական) միությունների միջցով ժողովրդական տնտեսության կարգավորմանը»։

կազմակերպմանը»: Առքհրդային սկսությունն արհմիություններին այնպիսի խնդիրներ և առաջադրում, վորոնք միանդամայն անմատչելի յեն նրանց կապիտալի յերկրում, վորովհետեւ բոլոր ժուղիան ամենից ամելի վարչությունների արտագրության դործին խառնվելուց:

Առքհրդային յերկիրն արհմիությունները նկատում է իրավաբոլիետարական դիկտատորայի հենարան: Այդ պատճառով, համաձայն Աշխատանքի Որենսպրքի (Հոդ. 16) արհմիությունների աշխատանքի և նրանց որինական սահմանների դեմ հարուցած ամեն մի արգելք վստանձություն և Առքհրդային Հանրապետության հիմքերի դեմ, քրեյական հանցագործություն և: Վարձողն այդ գեղագում կարող է տուժել Քրեյական Որենսպրքի 134 հոդվածի համաձայն, վոր պատժվում և վոչ պակաս, քան 6 ամիս աղատությունից զրկվելով և տուգանվելով ու գույքի կոնֆինակացիայով:

Սեղանի վրա զրած ճրագը ուժգին բանկեց ու սկսեց հանդչել: Այրվող պատրույզից կապատավուն մուլի բարձրացավ:

— Դե՛, ուրեմն, ժամանակ և, վոր հանգստանանք, — ասաց Սահմակյանը, աեզից վեր կենալով, — ուշ և: Կարծեմ ժամի 11-ը կը լինի: Մի ուրիշ անդամ եւ մի քանի այլ խնդիրների մասին կը խսնենք:

ԱՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ.

1. Ի՞նչպես և պաշտպանում կապիտալիստը իր բանվորների աշխատանքը:

2. Ի՞նչ և տալիս բանվորներին Աշխատանքի Որենսպիրքը:

3. Աւամ վրա յե տարածվում Աշխատանքի Որենսպիրքը:

4. Ի՞նչու՞ ՆեՊ-ին անցնելիս հարկ կեղավ Աշխատանքի Որենսպիրքը փոխել և վորոնք այդ վիճակությունները:

5. Ի՞նչպես եր առաջ բանվորական ուժի վարձման կարել:

6. Ի՞նչու՞ մենք անցանք միջնորդ բյուրոներին:

7. Վորո՞նք մն միությունների ամ խնդիրները, վոր կապած են միջնորդ բյուրոների կորդմակերպման հետ:

8. Կարո՞ղ ե աշխատանքի ուժության վերը Աշխատանքի Որենսպիրքի համեմատությամբ աշխատանքի սրբամանների վաստակում մոցնել:

9. Ի՞նչ և ասում Աշխատանքի Որենսպիրքը բանվորի արձակման մասին:

10. Ի՞նչ գեղքերում բանվորը կարող է արձակվել առանց արձակման հաստուցում ստանալու:
11. Ի՞նչ բան և ներքին կարգի կանոնները:
12. Ի՞նչ գեղքերում և բանվորը շարունակում իր դատումն ստանալ:
13. Ի՞նչպես ևն վարձատրում բանվորներին դարձուկումների ու տեղափոխությունների ժամանակ:
14. Ի՞նչ և աշխատավարձի պետական մինիմումը:
15. ՑԼ[®]ը և արվում աշխատավարձը:
16. Ի՞նչպես ևն ազահովվում բանվորները վարձողի սնանկության գեղքում:
17. Արդյոք գոյություն ունի՝ բուրժուական յերկըներում 8-ժամյա բանվորական որ:
18. Աշխատանքի Արենսգիրքն ու՝ համար և մացրել կրծառ բանվորական որ (8 ժամից կարճ):
19. Ի՞նչքա՞ն և աշխատանքի ժամանակի տեսլությունը զիշերը:
20. Ի՞նչու համար և մացրած ընդմիջումն որվա ժամանակ:
21. Աշխ. Արենսգիրքը թույլատրում և արտաժամյա աշխատանք:
22. Ի՞նչ գեղքերում և թույլատրվում արտաժամյա աշխատանքը և վարն և նրա թույլատրվության կարգը:
23. Ի՞նչ և ասում Աշխ. Արենսգիրքը հանդսուի որերի մասին:
24. Տարվա մեջ քանի անգամ և արձակուրդ արվում և ի՞նչ ժամէկեալ:
25. Կարելի՝ յեւ արձակուրդը դրամական փոխհատուցումով փոխարինել:
26. Ու՞մ են արվում լրացուցիչ արձակուրդներ:
27. Ի՞նչպես և սպազապահում Աշխ. Արենսգիրքը կանանց աշխատանքը:
28. Ի՞նչպես և սպազապահում Աշխ. Արենսգիրքը անշափահաների աշխատանքը:
29. Ի՞նչ և ասում Աշխ. Արենսգիրքը ձեռնարկությունների առողջապահական գրության լավացման, հատուկ հաղուստի և հատուկ սննդի համար ձեռք առնելիք միջոցների մասին:
30. Ո՞վ և հետևում Աշխ. Արենսգիրքի կենսագործմանը:
31. Ի՞նչ տարրերություն կա ցարական ժամանակի դուրժարանային տեսչի և այժմյան աշխատանքի տեսչի միջև:

32. Ինչու՞ մենակ աշխատանքի տեսուչների աշխատանքն անբավար է Աշխ. Որենսգրքի կենսագործման համար :

33. Ո՞վ և ոգնում աշխատանքի տեսուչներին իրանց ամենորդաց աշխատանքում :

34. Ի՞նչ պետք է անի գործարանային կոմիտեյին կից աշխատանքի պաշտպանության հանձնաժողովը :

35. Ի՞նչ և աշխատանքի պաշտպանության հանձնաժողովը՝ զերբ արհպրովագանզայի գործում :

36. Ի՞նչ և առում Աշխ. Որենսգիրքը արհմիությունների իրավունքի մասին :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.

С. КАПЛУН.—Охрана Труда в новых условиях. Изд. „Кр. Нови“.

Н. БЫХОВСКИЙ.—Что дает рабочему Кодекс Законов о Труде. Изд. ВЦСПС, 1924 г.

П. МЫТНИК.—Охраняйте труд. Изд. МГСПС 1924 г.

М. ВЫГДОРЧИК.—Нормальный труд. Изд. „Книга“ 1923 г.

С. БУХОВ.—Как охраняется труд работниц, по советским законам. Изд. МГСПС.

С. БУХОВ.—Что нужно знать фабрично-заводскому ученику о своих правах. Изд. МГСПС.

С. КАПЛУН.—Охраняйте детский труд. Изд. „Кр. Нови“ 1923 г.


С. КАПЛУН.—Что такое Кодекс Законов о труде (конспект лекций). Изд. ВЦСПС 1924 г.

С. КАПЛУН.—Охрана труда. ГИЗ.

С. КАПЛУН.—Здоровье и труд. Изд. ВЦСПС. 1924 г.

Е. КИЛИНСКИЙ и Л. КОЛОТУХИН.—Действующее законодательство о труде. Изд. ВЦСПС.

Кодекс Законов о Труде 1923 г. Изд. официальное.



20.	Վիշնեվեցին — «Աշխատանքի հաշմանդամների ապա-		20
	հովագըռումը»		
21.	«Կանոնադրության գործարկումներին և տեղկումներին կից կուլտ-հանձնաժողովների» . . .		5
22.	«Որինակելի կանոնադրություն բանակումըի, կարմիր անկյան և Փիդ-կուլափ խմբակի» . . .		25
23.	Սենյուշին — «Ակումբային աշխատանքի խնդիրնե- րը»		30
24.	Լ. Յ. ա. շ. կ. ս. — «Գողերը»		5
25.	» «Առաջին կարմիր դրոշը»		10
26.	Սպիրանչին — «Տուրերկուլյողը»		10
27.	«Յելիր պայքարի, ստրուկ զաղութի», (ինսցենիր.) . .		10
28.	«Փոխուղության գանձարկղների կազմակերպման կար- դը»		10
29.	Յ. մ. Ֆ. ի. ն. — «Բուսաստանի արհարժման 20 տա- րին»		50
30.	«Պրոֆմիությունը և նրա անդամները», (տպագրվում ե)		
31.	Ռոզենֆելդ. — «Ինչու և ինչպես պիտք և ուսում- նասիրել արհարժումը»		20
32.	» «Բանվորական առաջին միավորությունը կապիտալիզմի արշալույսին»		20
33.	» «Ի՞նչպես առաջացան և ինչպես եյին աշխատում առաջին արհմիությունները» 70		
34.	» «Արհեստակց. շարժումը մինչև 1914 թ.» 30		
35.	» «Արհեստակցական շարժումը համաշ- հարիցին պատերազմից հետո»		30
36.	» «Արհեստակցական շարժումն Ռուսաս- տանում (1905—25 թ.)»,		80
37.	» «Ի՞նչ է արհեստակց. արտադրակ. միությու- նը; Արհմիությունը և կուսակցությունը» 15		
38.	» «Ամստերդամ և Մոսկվա»,		35
39.	» «Ի՞նչ է պրոֆմիության կանոնադրութ»		55
40.	» «Ի՞նչ է հավաքական պայմանագիրը»		60
41.	» «Ի՞նչ է տալիս բանվ. աշխ. որենսգիրքը»		35
42.	» «Ի՞նչ է սոց. ապահովագրությունը»		40
43.	» «Աշխատանքները բանակումբում»		
44.	» «Պրոֆաշխատանքը գյուղում»		30
45.	«Պրոֆ գրագիտության դասագիրք»		

ՄԵԾԱՔԱՆԱԿ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻՆ ԶԵՂՋ

ՀՀ Սպային գրադարան



NL0945036

100

-100-

1926p.

ԳԻՒՆ Ե 35 ԿՈԴ.

ԱԳՀ

877